

Ի. ՍԿԼՈՐՑՈՎ-ՍՏԵՊԱՆՈՎ

ԴԵՊԻ ԱՍՏՎԱԾ
ՅԵՎ ԴԵՊԻ ՍԱՏԱՆԱՆ
ՅԵՂԱԾ ՀԱՎԱՏԻ ՄԱՍԻՆ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԳԵՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

Арм.

3-15342

Պրոկտորների բոլոր յերկրմերի, միացե՛ք

2

Ի. ՍԿԼՈՐՑՈՎ-ՍՏԵՊԱՆՈՎ

ԴԵՊԻ ԱՍՏՎԱԾ
ՅԵՎ ԴԵՊԻ ՍԱՏԱՆԱՆ
ՅԵՂԱԾ ՀԱՎԱՏԻ ՄԱՍԻՆ



ИИБ. № 5957

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

A 35606

И. СҚВОРЦОВ-СТЕПАНОВ

О ВЕРЕ В БОГА
И ДЬЯВОЛА

Армгиз—Издательство полит. литературы,
Ереван, 1939

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀամԿ(բ)Կ ԿԿ Կուսհրատը ձեռնամուխ է յեղել հակակրոնական բրոշյուրների սերիայի լույսընծայմանը, վորոնք նախատեսված են մասսայական ընթերցողի, ինչպես և հակակրոնական պրոպագանդիստի համար:

Սկզբորցով—Ստեպանովի բրոշյուրը՝ «Դեպի աստված և դեպի սատանան յեղած հալատի մասին», չնայած միջանի անճիշտ դրույթներին («կախարդության» մասին խոսում է վորպես «մասսայական հոգեխանգարմունքի» և այլն), կարող է ոգտագործվել վորպես նյութ հակակրոնական—պրոպագանդայի համար:

ՀԱՄԿ(բ)Կ ԿԿ ԿՈՒՍՀՐԱՏ

Առաջարկվող աշխատությունը նախատես տպագրված էր «Молодая гвардия» ամսագրում (1924 թ., № 5): Այնտեղ նա տրված էր «Հավատ և անհավատություն, հերետիկոսություններ և կախարդություններ» անունով: Բայց նա խոսում է վոչ միայն այդ մասին, նա խոսում է դեպի սատանան յեղած հավատի մեծագույն ծաղկման և այդ հավատի անկման մասին, նմանապես և՛ դեպի աստված յեղած հավատի հետ նրա ունեցած ներքին, փաստորեն անխզելի կապի մասին:

Այս աշխատությունը պիտի ծանոթացնի, թեկուզ լուի նախազգնական ուրվագծով, քրիստոնեություն ընդհանուր պատմության մի շատ ելական դրսի հետ:

Նա պիտի ցույց տա, թե ինչ ձևով հնադարյան կրոնները, մորոնք վորպես թե վերջնականապես դուրս ելին մղվել քրիստոնեության և կողմից, իրականում պահպանվել են նրանում՝ բազմաթիվ ելական ասարեր մտցնելով նրա մեջ:

Նա նույնպես պիտի ցույց տա, թե ինչպես նորադույն քրիստոնեությունը կամալական է, բունի սահման դժելով «հավատի» և «անհավատության» միջև, ձգտում է փրկել դեպի աստված յեղած հավատն այն կործանումից, չորը պիտի հանդիսանար դեպի սատանան յեղած հավատի կործանման տրամաբանական հետևանքը:

Յես չկարողացա աշխատությանը տալ այնքան հանրամատչելի բնույթ, վորպեսզի նա պիտանի լիներ մասսայական ընթերցողի համար: Հանրամատչելիության ձգտելով, յես սահմանափակեցի լինելի խիստ ընդլայնել աշխատության չրջանակները և մոտցրենել նրա մեջ մի արդյ շարք տեղեկություններ՝ ընդհանուր և տեսնական աշխատությունից:

ԿԱՆԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՀՄԱՅՈՂՆԵՐԸ

Այն համոզմունքը, թե գոյութիւն ունենաւ սատանա, վորն իր հզոր իշխանութեան եր յենթարկում հարարաստիկ կանանց, այսպէս կոչված «կախարդութիւններն», չի յեղել ինչ-վոր հարակից, կողմնակի պալար, վորը զուտ արտաքինացեալ, պատահաբար, մեխանիկորեն եր կապված միջնադարյան աշխարհայացքի սխառեմի հետ:

Նա չի յեղել «սնահավատութիւն», վորը կցվել եր իր եյությամբ խառնաշփոթ հավատին, չի յեղել «մարդկային խելքի» ցավալի «մոլորութիւն», վոր ինչ-վոր տեղից՝ դրսից եր կպել կրօնին, աշխարհի մասին ճշմարիտ պատկերացում տվող հայացքների սխառեմին:

Գիտական հետազոտողի համար, կրօնների դիտական պատմաբանի համար վոչ մի սկզբունքային տարբերութիւն չկա հավատի և սնահավատութեան միջև, աստծու գոյութեան վերաբերյալ պատկերացման ու աշխարհի կյանքին նրա միջամտելու և սատանայի գոյութեան ու նրա անդուլ գործունեութեան պատկերացման միջև, աղոթքների ու ծեսերի ներգործականութեանը (մասնավորապէս սրբազան «խորհուրդներն» («Тайнства»)) հավատալու և կախարդութիւնների ու հմայութիւնների ներգործականութեանը հավատալու միջև:

«Մուրբ հայրերը» միայն հետևողական էին, յերբ նրանք միևնույն խստութեամբ էյին պատժում աստծու գոյութեան և սատանայի գոյութեան նկատմամբ յեղող կասկածները: Նրանց սուրբ դրժբը, հատկապէս միջանի բաժիններում, հանդիսանում էյին աստծու և մարդկանց միջև յեղած հարաբերութիւններն պատմութիւն նույնքան, վորքան և սատանայի ու մարդկանց միջև յեղած հարաբերութիւնների պատմութիւն: Առանց սատանա-

յական ուժերը՝ աշխարհի դորժերի ընթացքին յեռանդուն և դո-
րեղ կերպով միջամտելու յենթադրության, աշխարհի «սրբազան
պատմության» միջանի հեքիաթներ միանգամայն անբացատրելի
կմնային հավատացյալների համար:

Ինչպես կարելի կլիներ բացատրել առաջին մարդկանց «մե-
ղանչումը», յեթե նրանց ստեղծել եր ամենաբարի և ամենազեռ
աստված: Յեւ, ընդհակառակը, ինչպիսի հասարակ բացատրու-
թյուն և ստացվում այն դեպքում, յեթե յենթադրենք, վոր դոյու-
թյունի ունի չար սատանա, վորն ունի իր սեփական պլաննե-
րը, և վոր աստված առաջուց վռչինչ չգիտե այդ պլանների մա-
սին և անդոր ե հակադորձելու դրանց:

Հավատացյալ մարդը ինչպե՞ս կսկսեր ժխտել սատանայի դո-
յությունը, յերբ վերջինս, ըստ ավետարանի, Հիսուսին յենթաբ-
կում եր իր սատանայական փորձություններին: Ինչպե՞ս կսկսեր
նա կասկածի յենթարկել «դիւլահարությունը», «այսահարու-
թյունը», յերբ Հիսուսի «բժշկական հրաշագործ դործունեյու-
թյունը», անփոփոխ կերպով, ընդունում եր դեերին պացկնետների
միջից վռնդելու ձե: Յեւ ինչպե՞ս նա կսկսեր ժխտել մոգությու-
նը և կախարդությունը, «գայթակղությունները» և «մարդարե-
ությունները», յերբ խորը, անսասան հավատով դեպի այդ ս-
մենը լցված են նոր ուխտի և հին ուխտի գրքերը:

Միայն նրա համար, վորպեսզի թեթեակի թարմացնեմ այդ
փաստերն ընթերցողի հիշողության մեջ, յես մեջ կրերեմ միջանի
որինակներ:

«Յեւից» գիրք, գլուխ VII. Մովսեսը և Ահարոնը, վորպեսզի
ահ տան յեզրիպտական փարավոնին, գնում են նրա մօտ: «Յեւ
գցեց Ահարոնը իր գավազանը փարավոնի առաջ և նրա սորուկ-
ների առաջ, և նա դարձավ ոձ: Յեւ կանչեց փարավոնը յեզրիպ-
տական իմաստուններին ու կախարդներին, և այդ յեզրիպտական
մոգերն իրենց կախարդություններով նույնն արեցին»:

Այնուհետեւ Ահարոնը, իր կախարդական ցպիկը (դավազանը)
ջրերի վրա բարձրացնելով, արյան փոխարկեց դեռի և փայտե ու
քարե անոթների մեջ յեղած ամբողջ ջուրը, և ձկները գետում
վռնչացան: Բայց «յեզրիպտական մոգերը ևս իրենց կախարդու-
թյուններով նույնն արեցին»:

VIII գլխում Յահվեյի (Յեհովայի) «լիպոր ներկայացու-
ցիչները» և յեզրիպտական կախարդների միջև յեղած մրցությունն
ավելի յե ծավալվում և վերջիններս իրենց հրաշագործությամբ
մինչև վորոշ սահման վերարտադրում են այն «պատիժները»,

Վորոնք Յեհովայի կողմից ուղարկվել էին Յեզիպտոս Ահարոնի միջոցով:

«Ավետարան ըստ Հովհաննու», գլուխ XIII: «Խորհրդավոր բնութիւնքի» ժամանակ մի աշակերտ հարցնում է Հիսուսին, թե ով է մատնելու նրան: Հիսուսը պատասխանում է. նա, վորին յես հիմա կտամ հացի պատառը: Յեվ հացի պատառը տվեց Հուդա Իսկարիովտացուն: «Յեվ նույն պատառի հետեից Հուդայի մեջ մտավ սատանան»: Հուդան իսկույն դուրս գնաց և ձեռնամուխ յեղավ իր մատնական աշխատանքին: Այն պատառը, վոր Հիսուսը տվեց Հուդային, ճանապարհ հարթեց սատանայի համար:

«Գործք առաքելոց», գլուխ XVI: Մի սպասուհի «բռնված էր մարդարեական վողով»: Նա շատ որեր գնում էր Պողոսի հետեւից և մեծարում էր նրան, վորպես աստծու առաքյալի, վոր փրկության ճանապարհ է նախադուշակում: Պողոսը ինչ-վոր բանի պատճառով «ղայրացավ նրա վրա»,—յերեւի, նա իր կողմն էր պրավում Պողոսի յերկրպագուների մի մասին,—և դուրս քշեց նրա միջից «մարդարեության վողին»: Չարարադգն անգառնալիորեն կորցրեց իր մարդարեական ձիրքը:

Նույն տեղում, գլուխ XIX, շատ է խոսվում «հրեական հմայողների» մասին և այն մասին, թե ինչպես «չար վողին» վռնդվելով նրանց կողմից, չարաչար ծեծեց նրանց, ինչպես և «կախարդությամբ զբաղվող» մարդկանց դրքերի մասին:

«Հովհաննու թուղթ առաջին», գլուխ IV: «Միեկեյալներ, մի՛ հալատաք ամեն վողինների, սակայն փորձեցեք վողիններին՝ աստծո՞ւց են արդյոք նրանք, վորովհետեւ շատ կեղծ մարդարեններ են հայտնվել աշխարհումս: Աստվածային վողուն և մոլորության վողուն այսպես ճանաչեցեք» և այլն: Մոլորության վողին, այդ—սատանայի վողին է, կամ, ավելի ճիշտ, սատանան ինքը:

Իսկ այնուհետեւ—ամենորոյա կրոնական պրակտիկան՝ աղոթքներ՝ «նենդավորից», այսինքն սատանայից մեղ փրկելու մասին, այնպիսի «խորհուրդներ», ինչպես է, որինակ, մկրտությունը, հանդերձ նրա հրաժարումով «սատանայից», «նրա ամբողջ ունեւորտալանությունից և նրա բոլոր դործերից» և հոյակապ յեղբարեակից արտահայտությամբ՝ «փշիւր ու թքիւր նրա վրա», այսինքն սատանայի վրա: Յեվ, ինչպես հայտնի յէ, սանահայրը կամ սանամայրը չբժվում է և իրոք փշո՞ւմ ու թքո՞ւմ սատանայի վրա:

Կարո՞ղ է հալատացյալն ասել, վոր նա ընդունում է հալատը դեպի աստված ու մշտնջենական աստվածային նախախնա-

մությունը, վորի մասին պատմվում է նրա սուրբ գրքում, Խա-
կայն մերժում է հալածող դեպի սատանան և նրա ուժով կա-
տարված կախարդությունները, վորոնց մասին պատմվում է այդ
նույն աստվածային գրքերում: «Սուրբ հայերը» կատարելապես
իրավացի եյին, յերբ նրանք միանդամայն հավասարաբեք եյին
ճանաչում սուրբ գրքերի բոլոր մասերը և միատեսակ անողորմ-
թյամբ արմատախիլ եյին անում անհավատության ու կասկած-
ների ամեն տեսակ սերմերը,—ում ել վերաբերեյին վերջիններս՝
աստծուն, թե նրա հակառակորդին—սատանային: Յեւ նրանք
նույնքան ել իրավացի եյին իրենց տեսակետից, յերբ խա-
րույկներ եյին վառում՝ ի կատարումն «Յեւիցի» հրահանգների—
(գլուխ XXIII, եջ 18 և 20)՝ «Վհուկներին կենդանի մի թողնիր» և
«աստվածներին, բացի միակ տիրոջից, զոհ բերողը թող ջնջվի»:
Յեթե այժմ «կախարդութիւններին» և «վհուկներին» կենդանի
յեն թողնում, ապա այդ—կրոնի ուղղակի հրահանգների ակներև
խախտումն է, ամենամահապաժեղի վկայությունը հավատի անկ-
ման վերաբերյալ:

2

ԱՍՏԾՈՒ ՔՈՒՐՄԵՐԸ ՅԵՎ ՍԱՏԱՆՆԵՐԸ

Հացը և գինին, վորոնց վրա քահանան խիստ վորոշ հետեո-
ղականությամբ յերգում և հմայություններ է կարդում, ձեռք են
բերում բացառիկ «սրբազան» հատկություն, կարող են ծառայել
«մարմնի ու հոգու ապաքինման» և «հավերժական կյանքի»:

Բայց հենց ինչո՞ւ այդպիսի դեպքում չի կարող խորհրդավոր
հատկություններ ձեռք բերել ջուրը, վորի վրա հմայություններ
մրմնջալով, պառավը լցնում է ածխիկի վրա:

Քահանան կարող է կատարել գինու և հացի պատառի հրա-
շարի փոխարկումը «տիրոջ մարմնի և արյան», կարող է հաջո-
ղությամբ աստվածային զորություն իջեցնել նրանց վրա:

Բայց ել ինչո՞ւ այդ դեպքում մի վորեւ պառավ կին չի կա-
րող տնորինող լինել «սատանայական զորության» նկատմամբ:

Յեթե հիվանդի վրա մի քիչ կարգաւ և յերգել, խուսկ ծխել
նրա շուրջը, նրա վրա սրտիկէլ աշխարհի ջուր, վորի վրա հմայու-
թյուններ են կարդացվել և վորի մեջ խաչ են իջեցրել և այլն,
այսպիսի «շրորհնության խորհրդից» հետո հիվանդության մեջ

կարող ե դարձ կատարվել: Այդ նույն բանին հասցնում ե և «սուրբ հաղորդությունը» ներս ընդունելը, վորի հետ ժաղդու մեջ ե մտնում «աստվածային զորությունը»:

Բայց ել ինչո՞ւ այդ դեպքում կախարդուհին, վհուկուհին, գլուխուհին չեն կարող հմայությամբ «ախտահար» անել մարդուն:

Յեկեղեցական ընդհանուր մաղթանքները՝ իրենց հմայություններով կարող են անձրև առաջացնել և անձրևը դադարեցնել:

Բայց ինչո՞ւ կախարդի հմայությունները չեն կարող վոչընչացնել բերքը, բերել հիվանդություններ, հրդեհ, ժանտախա, կարկուտ, մորեխ կամ դաշտային մկներ: Յեզկատական կախարդների հմայությունները միթե դողդոջների յերամակներ չթափեցին Յեզկատասի վրա:

Տաղտկալի յե բազմացնել հարցերը, ու կարիք ել չկա: Ուր ել վոր դառնանք, ամեն տեղ և ամենուրեք տեսնում ենք դադափարների միևնույն խումբը, մտածողության միևնույն ձևերը և ներգործության սկզբունքորեն նույնական, մինչև լիակատար անզանազանությունը, պրիումները:

Յեկեղեցական աստծու քուրմը—սատանայի քուրմի համախոհն ե, և սատանայի քուրմի հակառակորդն ե դարձել նա այն պատճառով, վոր նրանք համախոհներ են:

Նա սատանայի քուրմի լոկ հակառակորդը չէ. նա—նրա մրցակիցն ե, վոր գործում ե նրա հետ միևնույն մեքողներով: Նրանք յերկուսն ել միևնույն պատկերացումն ունեն աշխարհի և նրանում գործող ուժերի մասին:

Յեթե յեկեղեցական աստծու քուրմը իր հետ բերեր նոր, կախարդականից սկզբունքորեն տարբերվող մեթոդներ, նրա պայքարը կլիներ վոչ այնքան կատալի և վոչ այնքան բռնի: Նա կաքող եր վստահ կերպով սպասել, վոր նրա նոր, սկզբունքորեն ավելի բարձր մեթոդը, ինքը կխոսի իր համար և պրակտիկալում կարդարացնի իրեն: Որինակ, բժշկի համար յերբեմն ծանր ե լինում գիտել, թե ինչպես հիվանդներին տանջում են յեկեղեցական հմայություններով (խոստովանություն, հաղորդություն, վերջնություն), թե ինչպես ներվային հիվանդներին հասցնում են ծայր աստիճանի գրգռման. բայց նա լավ գիտե, վոր վստահությունը դեպի նրա գիտությունը, դեպի խնինի և լուծողական ձևի ֆիզիոլոգիական ազդեցությունը, դանդաղորեն, բայց հուսալի կերպով հաղթում ե խնկի, սուրբ ջրի և սուրբ հաղորդու-

Թյան խորհրդավոր ուժի հավատին: Բժիշկը խարույկներ չի պահանջի յեկեղեցական հմայողները համար, նա կարտահայտվի հողուտ դրական միջոցառումների, վորոնք ապահովում են նրա մեթոդի վերջնական հաղթանակը, այն ե՝ հողուտ բնության բոլոր պրոցեսների գլխավոր ըմբռնման ամենալայն տարածման:

Յեթե քահանան մրցակիցն է իր համախոհ կախարդի՝ այդ մասամբ բացատրում է մեզ, թե ի՞նչու կախարդուհիները դեմ ուղղված դատավարությունները ուժեղանում են XV դարում և ստանում են մղձավանջային, մասսայական բնույթ XVI և XVII դարերում:

Կախարդուհիների վերաբերյալ դատավարությունների նման վոչ մի բան հին աշխարհը չգիտեր: Նա դեռ չատ ուչ դարաշրջանում մարդկային զոհաբերություններ եր կատարում: Այդ կապակցությամբ արժե հիշեցնել թեկուզ Կարթագենը: Բայց և Հռոմի համար մարդկային զոհաբերությունները գտնվում են բնավ էլ վոչ անհիշելի անցյալում: Սակայն, այնպիսի դաժան հեկատոմբներ, ինչպիսին խարույկներն են, վորոնց վրա այրում էին հարյուրավոր և հազարավոր կախարդուհիների և հերետիկոսների, — իսկ այդ՝ կուլտուրայի պատմաբանի համար տրանսֆորմացիայի յենթարկված (ձևափոխված) մարդկային զոհաբերություններ են, — այդպիսի մասսայական զոհաբերություններ հին աշխարհն այնուամենայնիվ չգիտեր: Յեվ, յեթե մի կողմ թողնենք ստրուկներին, վորոնց հին աշխարհը մարդ չեր համարում, նա չգիտեր նաև կտտանքները, վորպես խոստովանության ստիպելու միջոց: Այդ տեսակետից նա քրիստոնեությանն է դիջում առաջնության արմավենին:

Հին դարերի կրոններից միայն Իսրայելի կրոնն է, վոր թր դարդացման բարձրագույն աստիճանների վրա իրեն հակադրում եր բոլոր մնացած կրոններին, վորպես միանգամայն բացառիկ, առանձնահատուկ, յեղակի կրոն, վորը մյուս կրոններին անմիացնելի, անհավասարելի և անհամաձայնելի յե: Ուստի և նա իր պատմությունը պատկերում է վորպես կրթմանաբար պայքար՝ ընդդեմ բոլոր մյուս պաշտամունքների:

Իսկ ընդհանրապես նախնադարյան ժողովուրդներն աչքի եյին ընկնում անսահման հանդուրժողականությամբ: Ուրիշների աստվածների, կուլտերի և հայացքների յուրացումը, նրանց փոխադարձ հարմարեցումը և միացումը (սինկրետիզմ) բնորոշում են վոչ միայն հռոմեական կրոնը՝ յերբ նա հասել եր իր դարդացման ավելի բարձր աստիճաններին: Այդ յերևույթը մենք կարող ենք

տեննե՛լ և՛ Հին Միջագետքում, և՛ Հին Յեդիպատում: Ապրե-
տանցիք շատ բան ընդունեցին ակիպո-սումերական հնությունից,
այնուհետև Բաբելոնը ասորական աստվածներին միացրեց իր
աստվածների հետ և միայն գլխավոր տեղը առաջ մղեց իր աստ-
ված-նախահորը՝ Մարդուկին, վորը նախապես զուտ տեղական
աստված էր: Վերին, Միջին և Ստորին Յեդիպատուի աստվածները
խաղաղ կերպով համախմբվեցին մի միասնական կաճառում, և
միայն՝ ի համապատասխանություն տարբեր մարզերի իրական
ուժի հարաբերակցությանը՝ առաջնություն ունեցողի դիրք վերա-
պահեցին Ողիբխին և Իզիդային:

Այն բանի քիչ թե շատ ակնառու իլյուստրացիաներից մեկը,
թե ինչպես և տեղի ունեցել հնագույն զանազան կրոնների փո-
խադարձ ասիմիլացիան, նրանց փոխադարձ համաձայնեցումը,
տալիս են Հունաստանն ու Հռոմը: Այստեղ կատարվել և պարզա-
պես նույնացումը՝ իրենց Փունկցիաներով և իրենց դիրքով նման
աստվածների, վորոնք բոլորովին տարբեր ցեղերի տարբեր աստ-
ված-նախահայրերն են յեղել: Ձևը հալասարեցվել էր Յուպի-
տերին, Հերան՝ Հունոսին, Աթենասը՝ Միներվային, Արեսը՝
Մարսին և այլն: Սրա հետ մեկտեղ մեկ աստծուն վերաբերող
միջերը փոխանցվել են մյուսին: Հարկավ, պահպանվեց մի տե-
սակ «տեղական կոյորիտ», վորը նույնպես չխանգարեց յերկու
կրոնական սիստեմների ասիմիլացիային, ինչպես Սմոլենսկի աստ-
վածամոր և Չերնիգովի աստվածամոր, — վորոշ իմաստով տար-
բեր աստվածների, — դոյությունը արգելք չէր հանդիսանում ուղ-
ղափառ քրիստոնեության համար իրեն համարելու միասնական
ու անրաժանելի:

Հին դարերի «մեծ պետությունները» այնքան էլ խիստ չէյին
տարբերվում՝ իրենց տնտեսական զարգացման մակարդակով:
«Հին աշխարհի» վորպես քիչ թե շատ միասնական ու ամբողջա-
կան մի բանի մասին ունեցած մեր պատկերացումների մեջ
պակաս ճշմարտություն չկա, քան «միջնադարյան հասարակու-
թյան և պետության» մասին, կամ «կապիտալիստական դարաշր-
ջանի» մասին ունեցած պատկերացման մեջ: Կարելի չե ասել, վոր
ստրկությունը նույնպես բնորոշ էր Հին դարերի բոլոր յերկրներին
համար, ինչպես վասսալական կախումը միջնադարի և վարձու
աշխատանքը նորագույն ժամանակի համար:

Տնտեսական զարգացման մակարդակների մոտիկության
ապացաններում՝ Հին աշխարհի կրոններում, յեթե մի կողմ թող-

նենք տեղական կողմերում, նմանութեան դժեւրը դերակալում ելին տարբերութեան դժեւրին:

Հոռմը իր վերջին, նախաքրիստոնեական ժամանակներում վոչ միայն չէր հալածում ու չէր ճնշում այն ժողովուրդների կրօնները, վրոնց նա բռնադատորեն միավորում էր իր յերկաթյա ձեռքով, այլև ավելի շուտ ինքն էր յուրացնում այն ժամանակի Արեւելքի ժողովուրդների կրօնական հայացքներն ու կուլտերը: Դեռ ավելին, այդ ժողովուրդները պատմական առաջնութեան շարժման յերկարատեւ պրոցեսում հասել էին փոխանակային տնտեսութեան և քաղաքական կենտրոնացման զարգացման այն ժամանակի համար բարձր աստիճանի: Դրա համար նրանց կրօններն էլ իրական հարաբերութեաններ յայդ Փանտաստիկ արտացոլումը կարողացան փոխարկել բարդ, մշակված, ներքուստ կազմակերպված ու կենտրոնացված սխեմաների: Այստեղ բավական է նշել միայն յերկու հանդամանք: Առաջին, Արեւելքի կրօններում պարզորոշարար հանդէս ելին դալիս մոնոթեիզմի, միաստվածութեան տեոքրիզմը, վորի դեպքում ավելի կամ պակաս հաջողութեամբ քողարկվում ու ջնջվում են ամեն մի կրօնի յերկրային և մարդկային արմատները: Յերկրորդ, — և դա կապված է նախորդի հետ, արեւելյան կրօնների միատիկակամ կողմը հարկորչում էր մեծ մշակվածութեամբ: Այդ արդյունք էր դասակարգային ամենաարված սոցիալարի, հսկայական տեղաշարժերի, հեղաշրջումների ու կատասարոֆների, վորոնք այն ժամանակ արդեն արված էին Միջագետքի ու Իրանի, Յեդիպտոսի ու Սիրիայի բազմադարյան զարգացմամբ ու քայքայմամբ:

Պարզամտորեն — արխայիկ, թափանցկորեն — նախնադարյան, անմիջական կերպով մարդկային ու յերկրային էր հանդիսանում հռոմեական կրօնը՝ բազմադարյան կուլտուրայի այս արգասիքների համեմատութեամբ: Նա պահպանել և իր ցեղերի ու առժային խմբերի յերկրային, Փիզիկական, նախնիների կուլտիք ծագելու ակներե դրոշմը: Այդ դրոշմը թափանցել էր աստվածների մասին, նրանց փոխադարձ հարաբերութեանների և մարդկանց ու աստվածների միջև յեղած հարաբերութեանների մասին յեղած բոլոր պատկերացումների մեջ:

Մինչդեռ, իր «պատմական դարաշրջանը» մտնելով մինչքրիստոնեական երայից հաղիվ հինգ հարյուր տարի առաջ և միայն յերկու հարյուր հիսուն տարի այդ երայի սկզբից առաջ իրեն յենթարկելով վողջ Իրալիան, Հոռմն այնուհետե կատարեց զբլխապառլայ կարյերա և ինչ — վոր մեկ ու կես — յերկու հարյուրա-

միասին ընթացքում վերափոխվեց մեծագույն պետութան, վորի սահմանները համարյա համընկնում էին այն ժամանակ հայտնի աշխարհի սահմանների հետ:

Տերիտորիալ արտաքին ընդարձակումներին ուղեկցում էին ներքին խիստ լարված սոցիալական պայքարը, սուր կոնֆլիկտները, հասարակական հարաբերությունների փոփոխականությունը և վերադասավորումները: Այն պրոցեսները, վորոնք Արևելքի յերկրներում յերկարաձգվում, տևում էին մեկ, վորոշ տեղերում՝ մեկ ու կես կամ նույնիսկ յերկու հազարամյակ, այստեղ ներդրվեցին վոչ մեծաքանակ հարյուրամյակների մեջ: Միջնադարյան Յևրոպան, ընդհուպ մինչև առևտրական կապիտալի եպոխան, վոր մտնում է արդեն «նոր ժամանակների» մեջ, ամենևին չի տեսել զարգացման այդպիսի տենդադին արագընթաց տեմպ:

Հոռմի ունալ հարաբերությունները դերաճեցին, իրենցից շատ հետ թողին նախապապերի փխրուն, պարզամիտ և թափանցկորեն-անթրոպոմորֆային (այսինքն այնպիսի աստվածներ ունեցող, վորոնք միայն իրենց ուժերի աստիճանով են տարբերվում մարդկանցից) կրոնը: Արդյոք Հոռմը կարո՞ղ եր հաստատել և պաշտպանել կրոնը, Արևելքի վեհապանծ, մուսլ, խորհրդավոր, վերերկրային կրոններին հանդիպելիս: Նա պիտի խոնարհվեր նրանց առաջ: Նրանք պատրաստի վիճակում էին տալիս այն իրդեությունական ձևերը, վորոնք նա ինքը ժամանակ չեր ունեցել մշակելու, բայց վորոնք անհրաժեշտ էին նրան: Նրան հարկավոր եր վոչ թե այնպիսի իդեոլոգիա, վորն արտացոլում եր անշատ-նալի անցյալը՝ միջտոհմային և միջցեղային կապերի փխրունությունամբ, պարզությունամբ և թափանցկությունամբ ու ներտոհմային և ներցեղային հարաբերությունների նույնպիսի պարզությունամբ: Այժմ նրան հարկավոր էին այնպիսի իդեոլոգիական ձևեր, վորոնք արտահայտեին Հոռմի սրընթաց վրա հասնող ներկան, այն Հոռմի, վորը տակավին քաղաքական մեծ միավորիչ եր, բայց նրան արդեն խորապես տակն ու վրա էին անում նրա համար անլուծելի հասարակական հակասությունները, տակավին աշխարհի տերն եր, բայց արդեն իր մեջ կրում եր քայքայման, նեխման և անկման տարրեր՝ վորպես արդյունք հասարակական հակասությունների անլուծելիության:

Արեւելյան կրոններում պարզորոշաբար արտահայտված կենտրոնացման տենդենցները (խոշոր հակումը դեպի աշտպես կոչված «մոնոթեիզմը», վորը, սակայն, փաստապես չհասավ

լրիվ զարգացման կրոններէց և վո'չ մեկում, վո'չ հնում, վո'չ եւ նորազույն ժամանակներում) համապատասխանում եյին Հոռոմի իրական նվաճողական և վարչական պրակտիկային: Վսեմությունը, խորհրդավորությունը, միտտիկան, հաճախ տանջալի գերլարումը, վորոնք բնորոշ եյին թե՛ արեւելյան աստվածների ոգրադներին, թե՛ նրանց մասին միջերէի, թե՛ կրոնական ցերեմոնիաների համար, ասեա չափսով, պատրաստված են յեղել Հոռոմի ներքին հարաբերությունների համար՝ նրանց իրացիոնալությամբ, նրանց անելանելիությամբ և անհուսալիությամբ, նրանց ճնշող ներգործություններով՝ զգացմունքի և մտքի վրա:

Արեւելյան կրոններէ ցեմտրալիզմը բաւարարում եր նրան, ինչ գեռ ոեալ եր հին Հոռոմում—նրա արտաքին-քաղաքական գրությանը:

Միստիցիզմը բաւարարում եր նրան, ինչն արդեն իրրեալ եր դարձնում Հոռոմի հզորությունը,—այսինքն նրա ներքին գրությանը:

Ողբիսն ու Իդիդան, Միթրան, Կիրեւան, Դիոնիսը—դրանք Հոռոմի համար թշնամիներ չեյին, սատանաներ չեյին, չար ուժեր չեյին,—դրանք հենց այն աստվածներն եյին, վորոնք նրան հարկաւոր եյին զարգացման տվյալ աստիճանի համար: Նա հալածանք չսկսեց այդ աստվածների և նրանց յերկրպագուների դեմ: Նա ինքն ոկսեց նրանց յերկրպագել: Նա ոկսեց ընդունել այդ իդեոլոգիական ձեւերը,—ինչպես հետադարձում միջին դարերը, հասնելով զարգացման վորոշ աստիճանի, կարող եյին հենց նույնպիսի յեղանակով ոգտադործել հոռոմեական իրավունքը, վորն աճել եր բաւականին զարգացած փոխանակային հարարությունների հոգի վրա:

Հատկանալի յե, վոր այսպիսի պայմաններում հող չկար վոչ «հերետիկոսներին» հարածելու համար, վոչ եւ «կախարդության» դեմ պայքարելու համար: Հոռոմեական հասարակությունը ուղղակի ծարավի յեր կախարդության, քանի վոր նրանում դոնում եր այն յեղքը, վոր նրան անողոքարար մերժում եր ոեալ իրաւանունությունը:

ՀԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՅԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Այստեղ հարկ չկա յերկարաբանելու թե ինչ ձևով քրիստոնեությունը շարունակեց և, դուցե, ուժեղացրեց նախաքրիստոնեական աշխարհի սինկրետիզմը (տարբեր կրոններից տարբեր յուրացնելը և միացնելը), փոխ առավ Միջագետքի և յեգիպտական, պարսկական և սիրիական կրոններից կարևոր մոմենտները, դրանք հյուսեց հին-հրեական կրոնի հետ, վորն արդեն վաղուց կարողացել էր շատ բան յուրացնել հենց նոր հիշատակված կրոններից, և, վերջապես, հաղթանակ տարավ բոլոր արևելյան մրցակիցների վրա: Ընդամին նա իր մեջ ներծծեց և հանդակութեն հարմարեցրեց մինչքրիստոնեական կրոնների սյուսեները հռոմեական անկումային հասարակության հատուկ կրոնական պահանջմունքներին: Այս թեման, վոր ինքնին շատ մեծ է, մեզ հաիադանց հեռու կտաներ մեր հոգվածի գլխավոր առարկայից:

Սխալ կլիներ կարծել, թե քրիստոնեությունն ուներ լոկ պայքարի հարաբերություններ նրան շրջապատող «հեթանոսական» կուլտերի հետ,—վոչ, տեղի յեր ունենում նմանապես այդ կուլտերի շատ տարրերի ասիմիլացիան: Քրիստոնեությունը չի կաղմավորվել ինչ-վոր տեղում և առանց անջություն ունենալու այն ժամանակ դոյություն ունեցող կրոնների հետ: Նա բառի ճշգրիտ իմաստով զարգացել է «հեթանոսական» մինչքրիստոնեական կրոններից: Վերջիններիցս գրեթե յուրաքանչյուրի մեջ կային մոտիվներ և տարրեր, վորոնք համապատասխանում էին հասարակական այս կամ այն պահանջմունքին: Քրիստոնեությունը իր մեջ միահյուսել էր տարրեր, վորոնք համապատասխանում էին հռոմեական անկումային հասարակության հատուկ պահանջմունքներին:

Քրիստոնեություն մեջ մասնավորապես կենդանացան արեւելյան և կլասիկ հնություն միջերը: Բայց նրանք վերածնվեցին նրա մեջ արդեն վորպես վարք սրբոց, և այն ահռելի ոճերը, առյուծները և վիշապները, վորոնց հնադարյան հերոսները հաղթում էին մենամարտում, դարձան սատանայի ալլ և ալլ մարմնավորումներ: Հեթանոսական աստվածները, յերբեմն չփոխելով նույնիսկ իրենց անունները, մասամբ փոխադրվեցին քրիստոնեական տաճարները, բայց այստեղ հաստատվեցին ար-

դէն իբրեւ քրիստոնեական սրբեր, վորոնց առաջ քրիստոնեական քուրմերը կանթեղներ են վառում, խունկ են ծխում և աղոթքներ վերառաքում:

Սակայն քրիստոնեութիւնն իր մեջ «հեթանոսական» կրօնի տարրեր ներծծում եր վոչ միայն սահմանափակ հոմեական ժամանակաշրջանում: Նոր տարրերի ասիմիլացիան տեղի յեր ունենում և այն եպիսոպոսում, յերբ քրիստոնեութիւնը սկսեց տարածվել Յելլոյպայի անդլո-գերմանական, կելտական, ուլալո-նական, լիտվական և այլ ցեղերի մեջ:

Քրիստոնեութիւն կաղմավորման պրոցեսը յոթ տիեզերական ժողովներով չափարտվեց: Այն դրանից հետո էլ տեւեց շատ հաբուրամյակներ և գրեթե նորից եր սկսվում յուրաքանչյուր նոր յերկրում, վորը նոր եր ընդունում մկրտութիւնը:

Ի հակադրութիւն գալլերի, գերմանացիների, սլաւոնների մինչքրիստոնեական բոլոր փխրուն և մասնատված կրօններին, քրիստոնեութիւնն իր բոլոր կերպափոխութիւններում և տեղական վարիանտներում պահպանեց նշանաւալից ցենտրալիստա-կան տարրեր: Այդ շատ արագ ըմբռնեցին բարբարոսական ցեղերի առաջնորդները, վորոնք աշխատում էյին այդ ցեղերը միավորել վորպես «պետութիւններ»: Նրանք ընդունում էյին նոր հաւատը, քրիստոնեական միսիոներների մեջ գտնում էյին ա-մենահուսալի ողնականներ՝ նորանոր մարդեր իրենց յենթարկե-լու գործում:

Իհարկե, այդ չեը խանգարում նրան, վոր՝ հանձին առանձին յերկրների հատուկ քրիստոնեական հովանաւորների, տեղական սրբերի և սրբաւայրերի, առանձին դյուղերի կողմից առանձնապես պաշտօղ սրբերի՝ կենդանանում էյին հեթանոսական անցյալի տոհմային և ցեղային աստվածները: Կամ, ավելի ճիշտ, բարբարոս ցեղերի տեղական աստվածները միացին նույն ֆունկցիաներով և նույն տեղերում, վորտեղ յեղել էյին առաջ. նրանք միայն փոխեցին իրենց անունները և դարձան նոր քրիստոնեա-կան կրօնի սրբեր, նրա ստորադաս, յերկրորդական աստված-ներ:

Քրիստոնեութիւնը ռադմատենչ և անհանդուրժող եր մնում միմիայն մինչև այն ժամանակ, քանի դեռ հարկ կար հասնելու նոր «հեթանոսական» մարդի հպատակեցման: Այստեղ քրիստոնե-ութիւնը տարածվում եր իսկապես «հրով և սրով»: Բայց այն մամենաից, յերբ ցեղի առաջնորդն ու գլխաւորը իր ժողովրդի

Հետ մեկտեղ մկրտվում եր, իսկ դրա հետ մեկտեղ դառնում եր միախոնքներ ուղարկող յերկրի վաստալը, քրիստոնեութունը վայր եր դնում իր զենքերը: Այն ժամանակ սկսվում եր «Հեթանոսության» և քրիստոնեության փոխադարձ հարմարեցումը, վորի հետևանքով յեկեղեցին ժամանակի ընթացքում հարստանում եր «Հեթանոսներ» սեփականած սրբերով, իսկ «Հեթանոսներն» իրենց տրադիցիոն տոները սկսում էին զարգարել քրիստոնեական յեկեղեցուց փոխ առած դեկորացիաներով, անուաներով և ամեն տեսակի աքսեսուարներով: Ի դեպ պիտի ասել, վոր «Հեթանոս» բառը—գիտական չե: Քրիստոնեաների բերանում այն նշանակում ե «կռապաշտ»: Բայց կռապաշտներ այն մտքով, ինչպես բացատրվում ե քրիստոնեական կատեխիզիաներում, մենք չենք գտնի: Արդեն վայրենին յերկրպագում ե վոչ թե «ծառին» կամ «քարին», այլ այն էյակին, վորը «խորհրդավոր կերպով» կապված ե տվյալ քարի կամ ծառի հետ: Այդ տեսակետից վոչ մի տարբերություն չկա «Հեթանոսական կուռքերի» և քրիստոնեական սրբապատկերների ու արձանների միջև: Ինչ վերաբերում ե այն տարբերություններին, վոր ուղղափառները գնում են իրենց կողմից «կուռք» ճանաչվող արձանների և սրբապատկերների միջև, ապա դրանք ուղղակի կուռքոյոյային են իրենց տեղնականությամբ և նախվությամբ:

«Հեթանոս» բառը քրիստոնեաների համար նմանապես նշանակում ե «պոլիթեիստ», «բազմաստվածապաշտ»: Բայց այս դեպքում բոլոր հիմքերը կան «Հեթանոսական» ճանաչելու նաև քրիստոնեությունը՝ իր յեռանձն աստվածությամբ, իր աստվածածնի և բազմաթիվ սրբերի կուռքով և իր ե՛լ ավելի բազմաթիվ աստանաներով: Մոնոթեիզմի (միաստվածության) տենդենցներն ամենից ավելի խորացված են հրեական և մահմեդական կրոններին մեջ: Բայց այստեղ ևս հավատը դեպի հրեշտակները—ցածրաստիճան աստվածություններ—և դեպի սատանաները—չար, բայց և այնպես աստվածներ—մոնոթեիզմը թողնում ե վորպես անկաստար տենդենց:

«Հեթանոսություն» բառի դործածությունը թեևադրվում ե հարմարության նկատառումներով: Բայց նրա տակ հարկավոր ե հասկանալ բոլոր կրոնները, վորոնք առաջ են մղվել դեպի մոնոթեիզմը ե՛լ ավելի քիչ, քան քրիստոնեությունը, հրեական կրոնը և մահմեդականությունը:

Այն ժամանակ, յերբ դեռ նոր եր տեղի ունենում քրիստոնե-



ության և հեթանոսության փոխհարմարումը, քրիստոնեության վերաբերմունքը դեպի հին կրոնների կենսունակ և փարթամ «մնացորդները» չէր կարող չափազանց սուբ լինել: Շրջապատող ամբողջ իրադրությունն ապրում էր այդ հեթանոսական հնությամբ, ամբողջապես համակվել էր նրանով, թափանցում էր տաճարները, իր կնիքն էր դնում քրիստոնեական աստվածապաշտության կարգի վրա, ամեն տեսակ ճանապարհներով ու միջոցներով իրեն էր յենթարկում հենց իրենց՝ յեկեղեցու սպասափոխներին: Գյուղական տերտերիկները, վորոնք «մոգության» բնույթ էյին տալիս քրիստոնեական աստվածապաշտության կարգին և ծեսերին,—սկեյիֆիկ ուսական յերևույթ չեն, և այդ նկատվել և վոչ միայն քրիստոնեություն ընդունելուն հաջորդող առաջին դարերում և վոչ միայն այն դեպքերում, վորտեղ տերտերիկները ծագում էյին «կիսաբարբարոս», հետամնաց ժողովուրդներից:

Հետևաբար, քիչ ժամանակ չպահանջվեց նրա համար, վորպեսզի քրիստոնեական յեկեղեցին ներքնապես կազմակերպվի, իլեռնողիպես ինքնորոշվի, սահմանադատվի չրջապատող ժողովրդական կրոններից, առաջ մղվի, վորպես «միակ ճշմարիտ հավատի» կրող՝ ի հակադրություն «հեթանոսության» և ժողովրդական կրոնների «սնահավատություններին»: Յեւ վոչ պակաս ժամանակ պահանջվեց նրա համար, վորպեսզի նա ստեղծի բավականաչափ ուժեղ և կենտրոնացած ապարատ, վորը դործեք ղեկավարող վերնախավին կատարելապես յենթարկվելով և վորն ընդունակ լիներ անողորբարար արժատախիլ անելու բոլոր նրանց, ուլքեր «անշատվում էյին» քրիստոնեությունից:

Այն ժամանակից, ինչ քրիստոնեությունը ավելի կամ պակաս չափով աճեց—զարձավ քաղաքական ուժ, կազմակերպվեց և սահմանեց իր հավատքի ուսմունքը, իր սրբերի հաստիքը, իր ծեսերը, իրեն հայտարարեց յեղակի հավատ,—բոլոր ժողովրդական կրոնները և վերջիններիս բոլոր այն տարրերը, վոր քրիստոնեություն կողմից չեյին ընդունվել, մերժվեցին վորպես սնահավատություն:

Յեւ ընդհանրապես մենք, մարքսիստներս, պետք է հաստատապես հիշենք, վոր «հավատի» և «սնահավատություն» միջև վոչ մի սկզբունքային տարրերություն չկա: Յեթե մենք ընդունեյինք այդ, մեզ հարկ կլիներ այնուհետև ընդունել, վոր գոյություն ունի ինչ—վոր «ճշմարիտ հավատ»՝ ի հակադրություն

«կեղծ համատների»: Նրանց միջև յեղած տարբերությունը՝ դար-
գացման աստիճանի մեջ է:

Ամեն մի կրոնի համար յեղակետ է ծառայում այն իդեոլո-
գիական նյութը, վորը նա արդեն դոնում է իրականության մեջ:
Յեւ յուրաքանչյուր նոր կրոն պահպանում է իր նախորդներից
թեկուզ մի ինչ-վոր «քաարյան քար»: Նա յուրատեսակ ձևով և
մշակում և կարգավորում այդ նյութը, նրա և նորի կոմբինացիա
կաղմելով, փաստորեն հաշվի չեն առնում մարդկային փորձի ծա-
վալումը, հասարակական հարաբերությունների կառուցվածքի
փոփոխությունները, պահպանելով մեկը, դեն նետելով մյուսը:
Յեւ ահա «ժողովրդական կրոնների» և նոր տարբերի հենց այդ
ամալգաման նա հայտարարում է «ճշմարիտ» կամ «ուղիղ հա-
վատ» Իսկ այն ամենը, վոր չի մտած այդ ամալգամայի մեջ,
այն ամենը, ինչ նա դուրս ելարտել ժողովրդական կրոններից, վո-
րոնք անդրադարձնում են անցյալ դարերը և մարդկության դար-
գացման դարաշրջանները, — այդ ամենը նա հայտարարում է
«անհավատություն», բոլոր ուժերով կոծկելով այն փաստը,
վոր նրա շատ խիստ եյական տարրերը ծագել են «անհավա-
տության» հետ ընդհանուր արմատից:

«Մահավատությունը», «կախարդությունը», վորոնց դեմ
ուժեղներեն հարձակվեցին XVI-XVII դ. դ. դատարանները, յերևան
են յեկել վոչ միայն այդ եպոխայում, կասկած չկա, վոր նրանք
դոյություն են ունեցել ամբողջ միջնադարի ընթացքում: Բայց
նրանք դոյություն են ունեցել վորպես հնադարյան կրոնների բե-
կորներ, վոր մնացել են քրիստոնեության հետ չկապակցված,
պահպանվել են վերջինիս հետ կողք-կողքի, նրան չչոչափե-
լով, նրան լրացնելով: Այսպես, դեռ ներկայումս, — սակայն խիստ
դունատված և խունացած, — Իվան Կուպալայի դիչերը կամ սե-
միկը լրացնում են ուսական ուղղափառությունը, նրա հետ
չընդհարվելով:

Քրիստոնեությունը, ինքնորոշվելով և կազմակերպվելով,
հանդես դալով իբրեւ միակ ընդունելի կրոն, հարկադրեց «անա-
ղաշտություններին» և «կախարդություններին» մտնել քրիստո-
նեական հայացքների օխտեմի մեջ, դառնալ քրիստոնեության
տարր:

Վորքան էլ պարագործային է հնչում այս, բայց բանը հենց
այդպես է յեղել: Յեկեղեցին հարկադրեց չարարախոս կախարդու-
հիներին և վհուկներին հավատալ, վոր նրանք քրիստոնեական

կրօնի սպանալի ծառաներն են, քրիստոնեական, սատանայի¹⁾ ծառաները:

Վանի դեռ «Հեթանոսական» ծեսերը պահպանվում էյին, վորպէս ժողովրդական կրօնի բեկորներ, — նման դարձյալ նույն ի վան Կուպալային կամ սեմիկին, — նրանցում կարող եր մնալ հեթանոսական կենսութեամբութեանը և պարզութեանը, վոր բոլորում եր բնութեան պրոցեսների և հողագործական տարվա հանդիսավոր մոմենտների հետ այդ տոնակատարութեաններին անմիջականորեն կապված լինելուց:

Յեւ նույնիսկ կախարդութեանը — դուրբական սպեղանիների վրա չնշալը, դրանք կիրառելը և այլն — կարող եր նույն չափով ազատ լինել ամեն տեսակ մոսյլ, ճնշող հանդամանքներից — ինչպէս, որինակ, սովորական դուրբական գրքացի դործունեութեանը ներկայումս:

Բայց այս ամենը՝ մինչև այն ժամանակ, քանի դեռ յեկեղեցին իրեն չեր յենթարկել կախարդութեանը:

Այդ ժամանակից սկսած չարաբախտ «կախարդունիներին» դեմքին, չաքերի արտահայտութեան մեջ, վորը արտաքինում և կյանքում յերևում են խորը վորդերդական դժեր:

Նրանք իրենք իրենց մեջ տեսնում են կորած, կործանված մարդկանց, վորոնց համար արդեն չկա վո՛չ վերադարձ, վո՛չ յեկը, վո՛չ փրկութեան: Նրանք (մենք խոսում ենք վո՛չ նրանց մասին, ովքեր անմեղ էյին դատապարտվել, մենք խոսում ենք «խակական կախարդների» մասին, այսինքն նրանց մասին, ովքեր իրենց էյին հալածում մութ ուժերի հետ իրենց կապ ունենալուն) — ձեռքից դնացած մարդիկ էյին, նրանք իսկական կախարդներ էյին, վորոնք ծախել էյին սատանային իրենց վորջ կյանքը և բախտը:

4

ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԽԱՐԴՆԵՐԻ ԳԵՄ

Ամբողջ նախընթացը բացատրում և մեղ, թէ ինչու կախարդունիների դեմ պայքարը չեր կարող սկսվել մեկ անդամից այն

1) Պէտք և կարծել, վոր «կախարդունիները» խոստովանում էյին սատանայի հետ կապ ունենալը այն ծանր կոտորածների ազդեցութեան տակ, վորոնց նրանք յենթարկվում էյին յեկեղեցու կողմից: Խմբ.:

մոմենտից, յերբ քրիստոնեութիւնը դարձաւ տիրապետող կրոն: Հասկանալի յէ, Վոր դրա համար յեկեղեցին այնքան պիտի ամբանար ներքուստ և արտաքուստ, Վորպեսզի ժողովրդական կրոնները մնացորդները հայտարարեն սատանայի իշխան, իսկ նրա սպասաւորներին—կախարդներ: Նա բաւականաչափ ուժեղ պիտի դառնար, Վորպեսզի պայքար սկսեր մոնոպոլ դիրքի համար և ձեռնամուխ լինել «կախարդներ» անխնա բնաջնջման:

Բայց այդ բնավ դեռ չի բացատրում, թէ ինչպիսիք էյին XVI դարում ստեղծված այն օպեցիֆիկ բարեկալստ պայմանները, Վորոնք առաջացրին «կախարդութեան» պոռթկումը և դրա հետ մեկտեղ «կախարդներ» դեմ ուղղված դատաւարութիւնները համաճարակը:

Առաջին հայացքից բանը պատկերանում է հանելուկային, ուղղակի անբացատրելի: Յեւ այն անբացատրելի յէ իրեալիստական պատմաբանների համար, Վորոնք պատմական բոլոր պրոցեսների պատճառները տեսնում են գաղափարների պրոզերնսի կամ ռեդերնսի մեջ:

Սովորական դարձած «միջնադարյան դատաւարութիւնները ընդդէմ կախարդներ» այս խոսքերը մեջ կա պատմական մեծ անճշտութիւն, Վորը կոծկում է այդ դատաւարութիւնները քոցիպակիան արժատները:

Հարկեմ, այն հարցութեան յայնչերին, Վորոնք դպրոցական բաժանամբ և իրենց ընդհանուր բնույթով հարկավոր է վերադրել «միջին դարերին»—ընկնում է «կախարդներ» դեմ ուղղված հայածանքների ամբողջ մեծ քանակը: Սակայն և այնպէս մենք զրպարտում ենք միջին դարերին, յերբ այդ դատաւարութիւններն անվանում ենք «միջնադարյան»: Նախ, դործն ամբողջ ուշադիր դիտելով, մենք բացահայտում ենք, Վոր պաշտոնական յեկեղեցական մոլեռանդութիւնն անվերջ մոլեղնում է մի յերկրում միուսի հետեից զուգընթաց այն բանին, ինչպէս մի յերկրում միուսի հետեից սասանվում է հասարակական հարաբերութիւնների միջնադարյան կարգը: Յերկրորդ, յեթէ նույնիսկ վերցնենք «միջնադարի» և «նոր ժամանակի» արտաքին շրջանակները, այն ձեռով, ինչպէս նրանք սահմանվում են ըստ հնադույն տրագիցիայի, ապա այստեղ ել ևս կարգովի, Վոր «կախարդներ» դեմ ուղղված հալածանքների մեծ վերելքն ընկնում է XV դարի վերջերքին, այսինքն միջնադարի վախճանին, իսկ

նրանց փարթամ ծաղկումը՝ XVI—XVII դարերին, վորոնք արդեն վոչ մի կերպ չի կարելի ներխցիլ միջնադարի մեջ:

Ուր ել վոր նայելու լինենք, այդ հարյուրամյակներում ամենուրեք մենք կտեսնենք կործանումն այն բանի, ինչով ապրում եր միջնադարը և ինչը նա քաշել-բերել եր հին դարերից: Աշխարհադրական մեծ հայտնագործությունների դարաշրջանը արդեն XV դարի վերջերքին (Կոլումբոս և Վասկո-դե-Գամա) վոչնչացրեց յերկրագնդի վերաբերյալ միջնադարյան, իսկ դրա հետ մեկտեղ և բիրլիական պատկերացումները: XVI դ. կեսերին Կոպերնիկոսը, իսկ փոքր ինչ ավելի ուշ Կեպլերը և Գալիլեյը համեստ, ստորադաս տեղ հատկացրին յերկրագնդին արեգակնային սխառնում և բառի տառացի իմաստով շուռ տվին այն պատկերացումը, վորի համաձայն յերկրագունդը, աշխարհի կենտրոնը և աստվածային դործունեյության բացառիկ ոբյեկտն եր: XVII դարի առաջին քառորդին և ընկնում Բեկոն Վերուլամբուզործունեյությունը, վորը, ցույց տալով, վոր փորձը և դիտողությունը գիտության միակ աղբյուրն են, սկզբունքորեն տալից կորեց բոլոր աստվածային կոահումները և դեդուկցիաները: Փոքր ինչ ուշ՝ Հարվեյը, բացատրելով արյան շրջանառության պրոցեսները, մարդկային որգանիզմի մեջ տեղի ունեցող պրոցեսների մեխանիկական մեկնաբանման հիմքը դրեց: XVII դ. յերրորդ քառորդին և ընկնում Սպինոզայի դործունեյությունը, վորը, յեթե նույնիսկ ընդունենք, վոր նա լիովին չազատվեց թեոլոգիայից, ձգտում եր աշխարհում ընթացող բոլոր պրոցեսներին տալու հետևողական պատճառական բացատրություն, տեղ չթողնելով հրաշքին կամ աստվածային միջամտությանը յերևույթների խիստ որինաչափ ընթացքում: Կամ վերցնենք XIV դարի Իտալիան, յերբ նա այնպես արագորեն դուրս յեկավ միջնադարյան կեղեվից, վերհիշենք իտալական Ռենեսանսի առաջնորդներին, ապա վերցնենք Գերմանիայի հումանիստներին (XVI դ. սկզբին), իսկ Երոստեսի Սերվանտեսին կամ Շեքսպիրին (XVII դ. սկզբներին), — ըստ ելության ինչքան քիչ դործ ունեն նրանք ասածու և ոստանայի հետ, նրանց մոտ վորքան հաճախ և յերևան դալիս գրեթե Ժամանակակից առողջ աշխարհըմբռնումը, վորի Ժամանակ մարդու գլուխը չի ճնշում ինչ-վոր գերբնական ուժերի ստրասփը: Սակայն, նրանցից վոմանց «ստանան» և «կախարդները» տվելի անհանդուստություն են պատճառում, քան աստված ու տերտերները:

Մենք վերցնում ենք առանձին նշանաձողերը, վորոնք նշում են յեվրոպական մարդկության հսկայական մտավոր նվաճումները: Կա մեկ հանրագումար՝ XVI դարին մոտենալիս առևտրական կապիտալը բոլոր յերկրներում կատարել էր վիթխարի կործանարար և ստեղծադրո՞ծ աշխատանք: Մի յերկրում մյուսի հետևից նա դուրս էր գցում մարդկային կյանքը միջնադարյան հունից և դրա հետ մեկտեղ մարդկանց գլուխներից սրբում—դուրս նետում միջնադարյան խլամը:

Յեթն հաշվի առնենք մտահորիզոնի անասելի ընդլայնումը, փորձի հարստացումը, աշխարհի խորացած ըմբռնումը և այլն, ապա յեվրոպական մարդկությունը XVI դարին մոտենալիս դարձավ վո՛չ թե «ավելի տխմար», այլ անսահմանորեն «ավելի խելացի», քան նա յեղել էր միջնադարի ժամանակաշրջանում: Նրա մտածողությունը, հետևելով ընդարձակփող փորձին, բոլոր բնագավառներում փչրում էր միջնադարյան չրջանակները: Այդ հատկապես վերաբերում է ղեկավարող, տիրապետող դասակարգերին, վորոնք ուղղություն էյին տալիս ամբողջ հասարակական կյանքին և ամբողջ պետական գործունեյությանը: Նրանք ղեկտոնությունը մոնոպոլիա դարձրին այնպիսի չափերով, վորոնք անկենսագործելի յեն արդյունաբերական—կապիտալիստական եպոխայի համար:

Յեվ հենց XVI դարից նկատվում է կրոնամոլության բուռն պոռթկում այն ժամանակվա «կուլտուրական» դասակարգերի մեջ, արտահայտվելով շատ յերևույթների մեջ, իմիջի այլոց «կախարչների» դեմ ուղղված անհեթեթ դատաւարություններում ևս: Այդ դատաւարությունները, թվում էր, թե արժանի էյին վոչ թե Երազմ Ռոտերդամցու, Ռեյխլինի, Ուլրիխ Փոն Հուտտենի, Թոմաս Մորի, Կոպերնիկոսի եպոխային, այլ «դոթական բարբարոսության» դարերին: Զուր չէ, վոր պատմաբանները «կախարչների» դեմ ուղղված այդ դատաւարությունները մինչև հիմա էլ անքննադատաբար անվանում են «միջնադարականություն»:

Ուշադրությամբ թափանցելով այդ դատաւարությունների խորքը, մենք բացահայտում ենք, վոր բանն այն չէ, թե իբր մարդիկ «ավելի տխմար» կամ «ավելի խելացի» յեն դարձել, այլ այն, վոր այն հասարակությունը, վորի մեջ նրանք ապրում էյին, ընդգրկում էյին արագ և խոր տեղաշարժեր, այդ հա-

սարակությունը կար առ կար քանդւում եր, կորցնելով իր վնաս-
քի տակի ամուր հողը:

Առևտրական կապիտալը, ծնւելով, դարդանալով, ծախւելե-
լով՝ մի յերկրում մյուսի հետևից քայքայում եր միջնադարյան
բոլոր կապերը, ամրակցիչները (скрепы) և զոգերը իտալիայում,
Հառաւային Ֆրանսիայում, Պիրենեան թերակղզում, Նիդերլան-
դիայում, Գերմանիայում, Անգլիայում: Կապիտալը աճող հո-
րությունը թուլացնում եր ֆեոդալական հարաբերությունները
և դրանք ամենուրեք խարխւում, քայքայւում ելին:

Յեւ այդ նույն տնտեսական նոր շրջաբերությունը ստեղծում
էր այնպիսի հզոր առևտրական և ֆինանսական ֆիրմաներ, ինչ-
պես ելին ֓ուգերները, Վելզերները, Ռեմբերները, վորոնց ա-
ռաջ տեղի ելին տալիս արագորեն հետ մղւող և անցյալի գերին
անցնող առևտրա-կապիտալիստական իտալիայի բանկիրական
տները:

Առևտրական կապիտալը դառնում էր նոր հասարակության
հրամանատարական ուժը: Նա ամեն տեղ ուղարկում եր նաւեր,
վորոնք բացահայտում և նրան ելին յենթարկում դադութային
անսահման մարդերը: Նրա ճնշման տակ ընդարձակւում ելին աշ-
խարհագրական հորիզոնները: Նա աստղաբաշխների հեռադիտակ-
ներն ուղղում եր դեպի լուսատուները և հարկադրում ճշտորեն
վորոշել յերկրագնդի տեղը տիեզերքում: Դնելով մարդկանց
աշխարհի հանդեպ նոր հարաբերությունների մեջ, մարդկանց նոր
ձևով վերադասավորելով և միմյանց հետ կապելով, հարված
հարվածի հետևից հասցնելով այն ամենին, ինչ կայուն եր, սովո-
րական, տրադիցիոն, նա դրա հետ մեկտեղ կորատում չուռու-
մուռ եր տալիս, տակնուվրա յերանում դադափարների վողջ աշ-
խարհը, կործանում եր պատկերացումների վաղեմի կապերը,
նրանց տեղն առաջ եր քաշում նորերը:

Այդ միջնադարյան հասարակության ամենակողմանի կոր-
ծանումն եր:

Բայց նա—նրա իշխող դասակարգերը—չէր կարող չպաշա-
պանել: Յեւ նա պաշտպանւում եր այն ամենով, ինչով կարող
էր, այդ թիւում և «կախարդների դատաւարություններով»:

ՌԵՖՈՐՄԱՏՈՐՆԵՐԸ ՅԵՎ ՀԵՐԵՏԻԿՈՍՆԵՐԸ

Այստեղ հարկ չկա ընդարձակարանելու այն բանի վերաբերյալ, թե ինչպես և ինչու այն ժամանակի քաղաքական պայքարը հանդես եր դալիս կրոնական զղեստավորմամբ, ինչպես և ինչու միջնադարյան հասարակության ինքնապաշտպանությունն ընդունում եր ռեֆորմացիայի և հերետիկոսությունների դեմ ուղղված յեկեղեցական պայքարի կերպարանը. այդ հանքահայտ բան է:

Իհարկե, կաթոլիկական հայեցակետից վիկլեֆը, Հուսը, Լութերը, Յվինգլին, Կալվինը, անգլիական թաղավոր Հենրիի VIII-ը, Փրանսական հուգենոտները, նիդերլանդական ռեֆորմատորները— նույնպիսի «հերետիկոսներ» են, ինչպես Թոմաս Մյունցերը կամ Հովհան Լեյդենացին:

Բայց մեզ, մարքսիստներին համար, բնավ եւ պարտադիր չեն սրբազնագույն պապերի կրիտերիումները: Մենք զգում ենք, վոր այդ յերկու շարք յերևույթների միջև ինչ-վոր տարբերություն կա: Յեւ մենք այն կգտնենք, յեթե ասենք, վոր յերբ գոյություն ունեցող հասարակարգի դեմ ուղղվող բողոքին մասնակիորեն հարում եյին դասակարգեր, վորոնք իշխում են «այսօր», կամ միանում եյին խմբեր, վորոնք «վաղը» իշխողն էր դառնալ եր սպասում, և յերբ այդ խմբերին բաժին եր բնկնում չարժան մեջ ղեկավարող դեր, ապա այդ չարժումը ստանում եր ռեֆորմատորական բնույթ՝ այդ բառի ճշգրիտ նշանակութամբ:

Այդ իմաստով հարկ ե ձախողակ ռեֆորմատորներ ճանաչել վոչ միայն Փրանսական հուգենոտներին, այլև հարավային Փրանսիայի ալբիգյաններին, թեպետ սովորաբար գործածվող բառը նրանց անվանում ե «հերետիկոսներ»: Նա ունի վորոշ հիմքեր, վորքանով վոր այնտեղ ռեֆորմատորական և հերետիկոսական շարժումները չկարողացան լիովին բաժանվել և շեղուկվել:

Բոլոր ռեֆորմատորական շարժումներին մեջ ֆեոդալներին, ազնվականութանը պատկանում եր ամենաաչքի բնկնող, յերբմեմ վորոշիչ դեր (Բոհեմիան, Գերմանիան, Շվեդիան, Անգլիան XVI դարում), այնպես վոր նրանք (ռեֆորմատորական

չարժումները) պատկերանում են վորպես պառակտում՝ միջնադարի գերիշխող ուժերի ներսում: Այդպես յեղավ նույնիսկ Նիդերլանդիայում, թեպետ և ուշ ժամանակների Հոլանդիայի բուրժուական կարողացավ իր դրոշմը դնել Իսպանիայի դեմ մղած պայքարի վրա: Մանավանդ վոր բուրժուազիան այստեղ առաջ եր շարժվում հատկապես իրեն վաղվան որվա գերիշխող դասակարգ:

Վորքանով վոր բոլոր ռեֆորմացիաները ներկայացնում էին «ընտանեկան վեճ» աշխարհիկ ֆեոդալների տարբեր խմբերի միջև և վորքանով վոր այդ վեճը կարող եր լուծում՝ ստանալ յերբորդի հաշվին, — հոգեոր ֆեոդալների հաշվին, նա զուրկ եր հեղափոխական խորությունից և հեղաշրջման տեղեկեցներից: Ռեֆորմացիաների մեջ, ռեֆորմացիաների ընթացքում և ռեֆորմացիաների միջոցով իշխանությունը և սեփականությունը վերաբաժանվում էյին ունեոր դասակարգերի սահմաններում, նրանց այն մասի միջև, վորին առևտրական կապիտալն ավելի ուժեղորեն եր ընդգրկել, և այն մասի միջև, վորը դեռ պահպանել եր իր վտուռի տակ միջնադարյան կարգի դեռ քիչ յերբուհ հողը: Ռեֆորմատորական շարժումների մեջ խոշոր դեր եր խաղում բուրժուազիան, բայց նա գրեթե հենց սկզբից համաձայնողականություն եր անում ռեֆորմատոր-ֆեոդալների հետ և նրանց հետ մեկտեղ ճնշում եր արմատական հոսանքները՝ հերետիկոսական հոսանքները, այդ բառի պատշաճ նշանակութամբ:

Ունեոր դասակարգերի սահմաններում իշխանությունը և սեփականությունը վերաբաժանելուց և իշխանության մեջ մասնակցելու համար համաձայնողականորեն նոր թեկնածուներ առաջ քաշելուց դատ, միքանի յերկրների համար դեռ մնում եր շատ եյականը — ռեֆորմացիայի արտաքին-քաղաքական նշանակությունը՝ ազատագրումը ռոտարեկրյա ուժերից, հումեական պապությունից, իսկ Նիդերլանդիայի համար միևնույն ժամանակ Իսպանիայից:

Ընդհակառակը, բուն հերետիկոսությունների մեջ հենց սկզբից աչքի յե ընկնում ինչ-վոր հեղափոխական, խորը հեղաշրջական մի բան: Նրանց կարող էյին հարել և խակապես հարում էյին անցատվածները, վորոնք գերիշխող դասակարգերից էյին: Բայց նրանք չէյին հիմնական գույն տալիս հերետիկոսական շարժումներին — տարբրիտներին՝ Բոհեմիայում, կրկնահունքներին՝ Գերմանիայում, լեհլիներին՝ Անգլիայում: Հերետիկոսությունների մեջ իրենց գոյությունն զգացնում էյին փաստորեն միջ-

նադարյան եպոխայից դուրս յեկող՝ վերակառուցված միջնադարյան հասարակութեան շահագործվող դասակարգերը: Իրենց գոյութիւնն զգացնում էին այն դասակարգերը, վորոնց չի պատկանել իշխանութիւնը «յերեկ», վոչ մի չափով չի պատկանում «այսօր», չի պատկանելու դեռևս և «վաղը»: Այդ դասակարգերն իբրև շահագործվողներ կմնան նաև ամբողջ արդիւնաբերական-կապիտալիստական եպոխայում: Դեռ ավելին. առևտրական, իսկ այնուհետև և արդիւնաբերական կապիտալի բերած հեղաշրջումները կործանարար ազդեցութիւնը իր ամենապայտուկ հարվածները կիջնեն ի հենց այդ դասակարգերի գլխին, ե՛լ ավելի կճգմի աւ կտորի նրանց, կնետի հասարակութեան բուն հատակը, նրանց ներկայացուցիչները վողջ կյանքը կդարձնի անլույս ու անհույս տաժանակրութիւն: Նրանց «այսօրը», նրանց «խակական լույսը» կբացվի միայն սկսած այն ժամանակից, յերբ այդ շահագործվող մասսաները կկարողանան իրենց ճակատագրի լուծումն իրենց ձեռքը վերցնել: Նրանց «այսօրը» արդեն յեկել է յերկրագնդի մեկ վեցերորդ մասում—Խորհրդային Մեծ Միութեան մեջ:

Աղոտ, մշուշապատ, հակասական, տակայն և անպնտ հերետիկոսութիւնների մեջ է իր անփոփոխ արտահայտութիւնը գտնում նախապրոլետարիատի և գլուղացիութեան բողոքը, վորոնք յենթարկվում են վոչ միայն պարզապէս ֆեոդալական շահագործման, այլև ֆեոդալական շահագործման, վորը հաղորապատիկ կերպով սրվում է փոխանակային հարաբերութիւնների արմատավորումով գլուղում: Այդ շերտերին միանում են այն խմբերը, վորոնք արհեստից հետ են չալրտվում դեպի հասարակական սանդուխտի ոտորին աստիճանները,—արհեստից, վորին կապիտալը արագորեն վերափոխում է:

Հերետիկոսական լայն շարժումները մեջ, յերբմեծ բաժանակնին պարզորոշ չգիտակցելով այդ, շահագործվող դասակարգերը կռիվ են սկսում ամբողջ շահագործող աշխարհի դեմ: Այդ պայքար է իշխանութեան համար, վորն անհուսալի յե տնտեսական զարգացման ամլալ աստիճանի համար:

Նրանք կարողանում են պայքար մղել, վորքանով վոր նրանց առանձին տարրերի միջև հաստատվում են այնքան լայն կոպեր, վոր հնարավոր են դառնում փոքրիշառն միաժամանակյա մասսայական յեկույթները:

Միանգամայն բնական է, վոր այդպիսի հերետիկոսութիւն-

ների դեմ միևնույն կատաղությամբ հանդես են դալիս և՛ կաթողիկոսները, և՛ ունիորմատորները, թեպետ և հերետիկոսություններն իրենց ծագման մեջ դրեթե միշտ կապվում են ունիորմատորական ձգտումների հետ, ինչպես լուարդները՝ Վիկլիֆի հետ, տաբորիտները՝ Հուսի հետ, Մյունցերը և կրկնակնունքները՝ Լութերի հետ, լեւելիները՝ ինդեպենդենտների հետ:

Հերետիկոսական և ունիորմատորական շարժումներն իրենց սաղմնավորման շրջանում, քանի դեռ նրանք այնքան թույլ էին, վոր նրանցից հեռու յեր իշխանության համար պայքարելու միտքը, հանդիսանում էին աղանդներ:

Ճիշտ այդպես եւ ջախջախւած ունիորմատորական և հերետիկոսական շարժումների բեկորները, վորոնք այնքան են ուժասպառւում, վոր նրանք այլևս անկարող են հասարակությունը և պետութիւնն անհապաղ իրենց յենթարկելու մասին մտածել, միատեսակ կերպով դառնում են աղանդներ:

Ազդելով շահագործողական հասարակության հարաբերութիւններէ մեջ, ամեն կերպ հարմարվելով նրանց, ողտադործելով նրանց, աղանդները, իրենց ներքին հարաբերութիւնների անձկությամբ և ինքնապարփակությամբ խաբվելով իբրև թէ միմիայն իրենց սեփական հյուսի մեջ յեփվելով յերևակայում են, իբրև թէ նրանք դուրս են յեկել շահագործողական հասարակության իշխանության տակից: Նրանց թվում է, թէ իբր իրենք կուռուցում են նոր աշխարհ, վորը եվրոպայիս պրոցեսում աննկատելիորեն աճելով և ընդլայնվելով, խաղաղ պրոպագանդէ միջոցով լուսավորելով «մտքերն ու սրտերը», իվերացնի և դուրս կմղի բոնության վրա կառուցւած ատելի հին աշխարհը:

Բոլոր այդպիսի աղանդների, բոլոր այդ հեղափոխական հերետիկոսական շարժումների բեկորների բախտը, վորոնք ջախջախւած և դատապարտւած են անգործության, միատեսակ են: Ներքին սերտ զոգումը սովորաբար ոգնում էր այն բանին, վորպեսզի նրանք ծառայեն վորպես կուռակման որինակելի բուժարաններ, կուռակման, վորը հեշտանում է իրարից հեռու դռնվող աղանդավորական համայնքների միջև գոյութիւն ունեցող կապերի շնորհիվ և նրանց մեջ դարդացած փոխոգնության շնորհիվ:

ՍՊԻՏԱԿ ՅԵՎ ՍԵՎ ՄՈԴՈՒԹՅՈՒՆ

Յեկեղեցական ուփորմացիան, հերետիկոսները հեղափոխական պայքարը, անընդունալի պահանջները, այս ամենը, թվում է թե, անսահման հեռու տարան մեզ կախարդներից և նրանց դեմ հարուցվող դատերից:

Իրականում ճիշտ հակառակն է:

Հենց այն հողի վրա, վրի վրա աճել էլին պարտված ուփորմատորական շարժումները, հերետիկոսները հեղափոխական անհաջող դրոհը, իսկ այնուհետև, նրա խորտակումից հետո, ներքնապես կղկղացած աղանդները,—հենց նույն այդ հողի վրա ծավալվեցին և կախարդները դեմ ուղղված դատավարությունները և բազմաթիվ կախարդների յերևան դալը:

Վոչ մի կասկած չկա, վոր տասնյակ—հազարավոր, իսկ ավելի ճիշտը՝ հարյուր—հազարավոր «կախարդների» մեջ, վորոնց այրեցին խարույկների վրա, հակայական տոկոսը, հավանաբար իննսուն տոկոսից վոչ պակասը, յեթե վոչ ավելին, տուժեցին անմեղ տեղը: Այդ նշանակում է, վոր միմիայն աննկարագրելի կտտանքները նրանց հարկադրեցին խոստովանել սատանայի հետ իրենց կապ ունենալը, սատանայի, վորի հետ նրանք իրականում ամենևին դործ չեյին ունեցել և չեյին ցանկանում ունենալ:

Սակայն և այնպես, այնուամենայնիվ մնում են հազարավոր, իսկ դուրս և տասնյակ—հազարավոր դժբախտներ, վորոնք դեռևս մինչև ինկվիզիցիայի կողմից դատի յեկեղեցիներ իրենք խորապես համոզված էյին, վոր իրենք մեղավոր են սուրբ ինկվիզիցիայի կողմից իրենց վերագրած արարքների մեջ: Նրանք իրենք հաճատացած էյին, վոր սատանան գիշերներն այցելում է նրանց, սեռային հարաբերության մեջ է մտնում նրանց հետ, վոր նրանք թռչում են դեպի վհուկների, կախարդների և սատանաների կազմակերպած խրախճանք, վոր նրանք մասնակից են լինում սատանային յերկրպագելուն, վորը հանդիսանում է պարողիան, յերբեմն ճշգրիտ, «սատանայորեն» աղավաղված քրիստոնեական աստվածապաշտության կարգի պատճենը, վոր նրանք, սատանայից տրված իշխանությամբ, մարդկանց վրա «արատ» են բեքում, առաջացնում են մրրիկ և կարկուտ, վոչնչացնում են ցանքե-

ըր, մօրեխ ու մկներ են ուղարկում դաշտերը, կարողանում են դառնալ փոխակերպուկներ՝ դառնալ կատու, չուն, դայլ և այլն¹⁾ :

Իհարկե, իբրև ընդհանուր ֆոն, վորի վրա կարող եյին նման յերևույթներ զարգանալ, ծառայում եր միջնադարյան աշխարհայեցողության մեծագույն ցայտունությունը և կենսունակությունը, կամ, ավելի ուղիղ ասած, կրոնական աշխարհայեցողության ցայտունությունն ու կենսունակությունը : Մոգության և հիմայության ուժի վերաբերյալ հավատը, վորը այժմ ել դեռ բնալ վերացած չե, այն ժամանակ դեռ վոչ մի չափով չեր խախտվել սկեսպտիցիդի կողմից : Յեթե, համբիշ զցելով ամեն որ քառասուն անգամ, հարյուր անգամ կարգացիլ «Հայր Մերը» կամ «Ave Maria»-ն, — ասոված անդոր կլինի մերժել ցանկացածի կատարումը : Յեւ, համենայն դեպս, յեթե չկարդացվեն, թեկուղ և զուտ մեխանիկորեն, սահմանված աղոթքները՝ սահմանված կարգով, ապա, անշուշտ, վորեւ զժախտությունից չի կարելի խուսափել : Հավատը դեպի մոգությունը, դեպի աստվածության վերաբերյալ խստորեն սահմանված բառային ֆորմուլի հարկադրական իշխանությունը, խորապես ներծծվել և հավատացյալների մեջ : Այդ պատճառով ել նրանք բոլորովին չեյին նկատում, վոր յեկեղեցու սահմանած խմբագրություններ ունեցող յուրաքանչյուր աղոթք, վորի մեջ արգելվում ե տեղափոխել կամ փոփոխել խոսքերը, ըստ ելության հանդիսանում և մոգական, կախարդական հիմայութուն :

Բայց նախնեթացիք դարձյալ հետևում ե, վոր ամենից չուս միջին դարերում, և վոչ թե նոր ժամանակներում, մենք պիտի սպասեյինք կախարդների նկատմամբ հալածանքների ծաղկման և բազմաթիւ հավատացյալ կախարդների յերևան դալուն : Մենք տակավին բացատրություն չենք գտել, թե ինչու «կախարդների» նկատմամբ հալածանքների պոթիւթիւմը տեղի ունեցաւ XV դարի վերջերքին և նոր պոթիւթիւմները վերաբերում են XVI և XVII դարերին :

Կենդանի, աներեր հավատ ունեցող մարդը պետք ե համոզ-

1) Այգալիսի գեպերում, յեթե հաջողում եր վերք հասցնել դայլ-փոխակերպուկին, պատմությանների համաձայն, կախարդը կամ վնուկն արկածից վերադառնում եր կտրված ձեռքով, զնդակով ծակված փոքրով և այլն : Միանշաժայն հետնդարան կերպով կենդանիներն ել ինկվիզիցիայի դատի եյին տըրվում և խորուկների վրա նրանց ևս այրում եյին վորպես սատանայի սպառնալիքների :

ված լինի,—և իրոք, իր ժամանակին նա համոզված էր,—վոր
յեթն խիստ վորոշ հետևողականությամբ արտասանի և յերգի
վորոշ խոսքեր, կատարի նույնքան խստով վորոշված շարժումներ
ձեռքերով և իրանով (որինակ, «խաչակիցներ», սահմանված պահին
ծուր գնելը, ճակատը գետնին խփելը և այլն), ուտի մի կտոր «որհ-
նած հաց և խմի մի գդալ գինի» («Քրիստոսի մարմինը և արյու-
նը ճաշակել»), ասլա աստված անդոր կլինի ընդդիմանալու այդ
կախարդանքին: Նա սատանաներին դուրս կբշի «դյութվածի»
միջից (ինչ-վոր «կախարդի» կողմից «դյութված»), անձրև կու-
շարկի, կվոնչնացնի (դարձյալ վորևե «վհուկի» կամ «կախարդի»
կախարդությամբ բերված) մորեխը կամ մկներին: Իսկ յեթե
սպասված արդյունքը չստացվի, ասլա հետևողական և յուրորի-
նակ կերպով տրամաբանական կայուն բացատրությունը պատ-
րաստ է՝ կամ կախարդությունները ֆորմուլաները չեն արտա-
սանվել պեղանտիկ ճշգրտությամբ,—վորևե բան մոռացված կամ
փոխված և յեղեկ,—կամ նրանք արտասանվել են առանց անհրա-
ժեշտ հավատի և համառության, կամ, վոր ամենից հավանական
է, դարձյալ մատ և խառնել «կախարդը»՝ իր կախարդակա՛ն հմա-
յություններով և ջլատել և հմայողի (քահանայի) գործողու-
թյունները, նրան իր իշխանությանն և յենթարկել, հանդեպրել և
հմայության սահմանված կարգի խախտման:

Վոչ հավատացյալները, վոչ նույնիսկ մենք, անհավատներս,
սովորաբար չենք նկատում, վոր յուրաքանչյուր ժամասացու-
թյուն, յուրաքանչյուր սահմանված յեկեղեցական ծես—ամբող-
ջապես մոգություն է, ամբողջապես հմայություն է: Յեւ հենց
այդ մոգությունը հարկավոր էր անվանել «սպիտակ մոգու-
թյուն»:

Բայց յեթե մարդիկ խորապես համոզված են «սպիտակ մո-
գության» իրական լինելու մեջ,—մոգություն, վորը հարկա-
դրում է «աստվածային ուժերին» կատարելու մարդկանց առ-
հանջները, ասլա կրոնական մտածողության համար ազդակող
անհետևողականություն կլինի, յեթե նա սկսեր ժխտել «սև մո-
գության» հնարավորությունը, վորը մարդկանց թույլ և տալիս,
սլայմանադրվելով սատանայի հետ, նրա իշխանությամբ հրաշալի
գործողություններ կատարել: Քահանայի հմայությունները ջու-
րը վերածում են «սրբադան ջրի», աստվածային ուժի իջեցում
են գինի և հաց պարունակող անոթի մեջ և դրանք փոխարկում

են հենց աստծու մասի և արքան, աղոթք կոչվող հմայութիւնները կարազը դարձնում են սրբայնող և բուժիչ, բայց ինչո՞ւ այդ դեպքում կախարդի զբթմնջումները, նրա «սարսափելի» հմայութիւնները (նրա աղոթքը սատանային), ուրիշ «կախարդներից» յուրացրած մարմնի շարժումները չեն կարող սատանա կանչել, սպեղանին դարձնել կախարդական, «արատավոր» դարձնել դեռահաս կնոջը, մորիկ բերել, աղբյուրը ցամաքեցնել: Ընդամենը սատանան ամենակարող ելակ է, վորը տակավին վոչ անաջողակ շարունակում և պայծարը հենց աստծու դեմ: Յեւ վեհ հայտնի չէ, թե յերբ և ինչով կվերջանա այդ սլաքարը:

Նշանակում է, հալատացյալ մարդը, յեթե նա ցանկանում և հետեւողական լինել, պետք է ընդունի, վոր «սե մողութիւնը» նույն չափով է հնարավոր, ինչպես և յեկեղեցական մողութիւնը, և հնարավոր է, յերեւակայելի յե «սե մողութիւն» թեկուզ և ժամանակավոր հաղթանակը յեկեղեցական մողութիւնի վրա:

Հալատացյալ մարդիկ և լիբերալ լուսավորիչները սովորաբար չեն տեսնում, վոր չի կարելի կարեկցութեամբ խոսել «միջնադարյան սնահալատութիւններ» մասին, վորոնք արտահայտվել են կախարդների յերեւան դալով և նրանց դեմ ուղղված հալածանքներով, և միաժամանակ հարգանքով վերաբերվել աստծուն հալատալուն, կրոնին ընդհանրապես: Յեկեղեցական հմայողը—ե՛ միջնադարյանը, և՛ ժամանակակիցը—կախարդի հետ միեւնոյն մակարդակի վրա չե կանգնած:

Բացի այնպիսի ընդհանուր պայմանից, ինչպիսին է կրոնական աշխարհայեցողութեան կենդանի և անմիջական լինելը, սատանայի հետ ցամոզմունքով կապ հաստատող կախարդների դոյութեան վերաբերյալ հալատի յերեւան դալու համար պահանջվում էր նույնքան ընդհանուր բնութիւթի մի նախադրյալ ևս՝ հոգեկան անհալասարակչողութուն, վորը փոխանցվում էր հիւստերիայի ծայրահեղ աստիճանին:

Բայց XVI—XVII դ. դ. ընդհանուր պայմանները, հատկապես միջանի շերտերի մեջ, հալատանց բարենպաստ հող ստեղծեցին համաճարակային հոգեկան հիւանդութիւններ համար: Մարդիկ կարծես թե մեկեն դուրս նետվեցին այն հունից, վորով ընթացում էր նույն կյանքը մի շարք հարյուրամյակների ընթացքում: Տեղի յե ունենում պապենական պայմանների խնտ կտրուկ փոփոխում: Հնարավոր է, վոր նույնիսկ արդյունաբերական հեղաշրջմանը չեն ուղեկցել այնպիսի կործանարար, լայնածաւալ և

խորը հեռանդներ, ինչպես և առևտրական կապիտալի դրսևը և դիսպալուստ ծախարումը: Տվյալ կապակցութեամբ բախակառն և հիշեցնել թեկուզ սրընթաց, բայց դրա հետ միասին և յերկարա-
տե՛ գնորի հեղափոխութեանը, վորը հիմնովին շուտ եր ապրիս
յեմբողական մարդկութեան դոյութեան բոլոր պայմանները: Նրա
դործողութեան սրութեանը դերադանցեց միայն գնորի այն հեղա-
փոխութեանը, վոր տեղի ունեցավ մեր աչքի առաջ: Մակաթի,
ի տարբերութեան XVI դարում սկսված հեղաշրջումներեց, ապա ռու-
սագույն հեղափոխութեանը և նրա դործողութեանը վոչ մի միտ-
տիկական և հանելուկային բան չեյին հանդիսանում մարդկանց
համար և չեն հանդիսանում:

XVI դ. յերկրորդ քառորդին հասնելիս ջախջախեցին դատան
չահագործմանը պրոլետարիատի և դյուշայցիութեան կազմից
ցույց տրվող դիմադրութեան վերջին փորձերը: Ռեալ հարարե-
րութեանները և նրանց դարդացումը վոչ մի հույս չեյին ապրիս:
Փրկութեանը պիտի դար վոչ թե ուսլ «վաղվա որում», այլ
հանդերձյալ «վաղը չե մյուս որ»-ում: Այդ արդեն ինքնըստին-
քյան կործանում եր ներքին հարարերութեաններին համապատաս-
խանութեանն արտաքիններին, հոգեկան կառուցվածքին՝ սրբեկ-
տիլ պայմաններին, — այն համապատասխանութեանը, վորը կադ-
մում և հոգեկան համաարակշռութեան եյութեանը:

Լիակատար հոգեկան անհամաարակշռութեանն իր հասունեկ
դունալորումը ստանում եր կոնկրետ պայմաններեց: Հուշալուս
միանձնուհիները, իհարկե, ամենեց հաճախ տեսնում եյին Մարի-
ամին, Հիսուսին, սոյալ վանքի կամ քաղաքի պաշտպան սրբերին,
առաքյալներին, յուզարեր կանանց, Մարիամ Մագլթալիսացուն և
այլն: Յեվ, վո՛չ հենց իրենք, վո՛չ չրջապատողները չեյին կատե-
ծում նրանց տեսիլների ուսլ լինելու մեջ: Նրանցից ամենեց ա-
վելի բախտալորները, նրանցից նրանք, ում նյարդերն ամե-
նից ավելի եյին քայքայված, մեծարվում եյին վորպես մարդարե-
ներ և քարգարեուհիներ, պայծառատեսներ, վորոնք չնորհի եյին
արժանացել: Նրանց հալուցինացիների մասին և նրանց՝
դեպի դրախտը կատարած բանդագուշական ուղևորութեանների
մասին բարեպաշտորեն պատմում եյին, և այդ պատմու-
թեանների մեջ տեսնում եյին յերկնքի և նրա սուրբ բնակիչների
ուսլ լինելու անհերքելի հաստատումը: Նյարդերը քայքայված
այդ մարդիկ հարտարարվում եյին սրբեր, կազմվում եյին նրանց
վարքադրութեանները, և այդ «վարքադրութեանը սրբոց»-ները

ապրիլ ելին պատրաստի ձևեր հետադա նյարդային և հոգեկան խեղումների համար:

Իսկ այլ հանգամանքներում Հիսուսը, նրա մայրը, նրա հրե-
աակները և սրբերը փոխարինվում էին սատանաներով և նրա
սպասավորներով, ճանապարհորդությունները դեպի վերախոյ
թուիչներով դեպի խրախճանքը, բուժումները, հարևաններին ող-
նելը—նրանց վրա հիմանդություններ և ամեն տեսակ աղետներ
թափելով: Յեւ յեթե աստվածային ուժերի հետ հարաբերություն
ունենալն ընդունվում էր վորպես անխախտելի փաստ, ապա ի՞նչ
կերպ կարելի էլիններ կասկածել իրենց հոգին սատանային ծախած
և դրա փոխարեն նրա հսկայական ուժի և իշխանության մի մասն
սաացած մարդկանց դոյությանը:

Միքանի հուզալառ «արդարակյացուհներ» հայտարարում ե-
լին, վոր նրանց տեսիլքների Հիսուսը նրանց ընդունել և վորպես
իր «հարոն», իսկ իրեն—նրանց «փեսան»: Մենք միայն դժվարու-
թյամբ կարող ենք պատկերացնել, թե ինչ անհավատալի ալլասեր-
վածության և հալուցինացիայի պիտի հասներ մարմնի սխտե-
մատիկ բորբոքումը նրա կարծեցյալ մահացմամբ: Այդ պատճա-
ռով մենք վուչ մի կերպ չենք կարող անմեղ ընդլթ առլ ալդ
Փանտաստիկային, վորն «արդարակյացուհների» ասրումների և
զգացմունքների նկարագրության համար ողտվում ե սեռային
հարաբերությունների լեզվով:

Բայց յեթե այդ լեզուն դործածելի չե վոմն «արդարակյացու-
հու» և Հիսուսի, նրա հալուցինացիայի միջև յեղած հարաբերու-
թյունների համար,—եւ վորո՞նք են այն հիմքերը, վոր կարելի
լիներ խառել, թե սատանան կանանց մեջ նմանապես ուներ իր
հարոններն ու կանայք:

Յեւ դուր չե, վոր «կախարդների» պատմությունը գիտե
դեպքեր, յերբ առանձին վանքերում բոլոր միանձնուհիները աստ-
ծու յերկյուղած և նվիրված սպասուհիներից դառնում էլին ա-
տառայի սպասուհիներ, կախարդուհիներ, սկսում էլին դեպի դի-
վական խրախճան թռչել, և թռչում էլին այնքան ժամանակ,
մինչև վոր սրբադան ինկվիզիցիան խարույկ եր բարձրացնում և
նրանց մարմինը այրում եր՝ նրանց «հոգին» սատանայից փրկե-
լու համար: Անտարակույս, այդ միանձնուհիները խելացնորու-
թյամբ առաքելիկա են յեղել դեռևս առաջ, մինչև սատանային
դիմելը, աստվածային ուժերի հետ իրենց հաղորդակցվելու ժա-
մանակ: Փոխվում եր միայն ուղղությունը, մասսայական աքի-
խաղի հաղուդ յերանդը: Բանն ամբողջապես դրան ե հանդուս:

Միևնույնն եւ եւ ժաննա դ'Արկի (XV դարի առաջին յեր-
րորդում) վերաբերյալ միջերում: Նրա հուղափառությունը
սկզբում ճանաչվեց սրբադան, իսկ հետո այն վերագրեցին սա-
տանային եւ ջանացին բժշկել խարուկի միջոցով:

Հոգեբուժի համար, պատմաբանի համար, ընդհանրապես դի-
տության համար քրիստոնեական սրբերի եւ քրիստոնեական կե-
խարդների միջև վոչ մի սկզբունքային տարբերություն չկա: Յե-
թե ցանկանում եւ ընդունում ես սրբերին—ճանաչիր եւ ընդունիր
կախարդներին: Յեթե ծիծաղում ես սատանայի վրա կախարդա-
կան ներգործություն անելու վրա,—ծաղրիր եւ ասածու վրա մո-
ղական ներգործություն անելու վրա: Յեթե ժխտում ես սատա-
նայի գոյությունը,—ժխտիր եւ ասածու գոյությունը:

7

«ԿԱՆԱՐԳՈՒԹՅԱՆ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Սակայն, թեպետ եւ ասածուն հնազանդվելը եւ սատանային
հնազանդվելը հոգեբանորեն եւ իդեոլոգիապես մեզ պատկերա-
նում են վորպես աղգակից, վորոշ մարդով նույնական, աղցի-
լալեւ նրանց միջև խորը անդունդ եւ ընկած:

Կախարդները դժբախտ միայնակներ են: Նրանք բաժանվել
են շահագործողների յեկեղեցուց, լինի այն կաթոլիկական թե
բողոքական յեկեղեցի: Նրանք մասսաներով յերևան են դալիս
այն դարաշրջանում, յերբ անհնար են դառնում հաջողության
վորոշ հույս ունեցող հերետիկոսական ապստամբությունները,
քանի վոր տիրող դասակարգերն արդեն կարողացել էին կառու-
ցել կենտրոնացած քաղաքական մեխանիզմ, վորը հենց սաղմնա-
յին դրության մեջ ճնշում եւ շահագործվողների բունտի փորձե-
րը: Նրանք կապված չեն աղանդների հետ, վորոնք հնարք են
դնում իրենց համար հարմարություն ստեղծելու չար ու դաժան
աշխարհում: Նրանք, իրոք, թշվառ միայնակներ են: Դրանումն
եւ բացառությունը հայացքի մեջ յեղած այն տրադիցիան, վո-
րով նկարիչները պատկերացնում են ծեր եւ յերիտասարդ կե-
խարդներին:

Բայց այդ—բողոքող միայնակներ են: Նրանք յուրբերնակ
ձեռով վրեժխնդիր են լինում այդ անարդ հասարակությունից,
վորի մեջ նրանք ապրում են: Նրանք տոտմ են նրան իրենց քա-

քայլած նյարդերէ, իրենց մշտական հուշալուստության, իրենց անզուապ յերևակայության ամբողջ ուժով, — յերևակայութեան, վորին զսպող կենտրոնները նրանք չեն կարողանում կոտորովի յենթարկել: Նրանք ատում են նրան իրենց անդոր ատելութեան մաշող ամբողջ կրակով: Յեթե կուզեք, այդ XVI և XVII դարերի անարթիտա-ինքիլիլիդուալիտաներն են: Միայն թե ուռմբի վոլաբեն նրանք շահագործողների հասարակութեան դեմ գործում էին հմայութեաններով և կախարդական սպեղանիներով:

Իհարկէ, այսպէս կոչված կախարդները և վհուկները մեծ յերբեմն-յերբեմն պատահում էին Ֆեոդալական դասի (աշխատ-կանութեան), ինչպէս և բուրժուազիայի ներկայացուցիչներ ու ներկայացուցչուհիներ: Բայց այդ միանգամայն բացառիկ, յեղափոխ-դեմքեր էին: Իսկ այնուհետև նրանք, հատկապէս սոցամարդիկ, քառ յերևութին, մեղավոր էին վոչ այնքան պիմիտիվ հրաշա-գործութեան համար, վոր բնորոշում է կախարդների արհեստը, վորքան ալքիմիայով և աստղարանութեամբ (աստրոլոգիայով), ինչպէս նաև «քնափիլիսոփայութեամբ» դրադիկու համար, վորոնք հասցնում էին նրանց ամենակողմանի կոնֆլիկտները միջ-նադարեան աշխարհացոյցի հետ: Կցկտուր սվալիներով դատե-լով, այստեղ խոշոր դեր խաղացին արաբական աղբեղութեան-ները, վորոնց նշանակութեանը Յեմբուպայի մտավոր զարգացման մեծ ընդհանրապէս դժվար կլինէր չափազանցել: Այդ «կախար-դուհիները» չատերը արդարացիորեն տեղ պիտի գտային (մասամբ եւ դրամեցին) ժամանակակից դիտութեան (քիմիա, ֆիզիկա, մեխանիկա, աստղաբաշխութեան, մաթեմատիկա) պատմութեան մեջ, և վոչ թե «կախարդները» և «կախար-դութեանները» պատմութեան մեջ: Յեւ նրանց դեմ ուղղված դատաւարութեանները բնութագրական են, իսկապէս, ուրիշ շուտ միջին դարերի համար, քան նոր ժամանակի համար:

Ընդհանրապէս, իսկական կախարդները անսահմանորեն սովե-լի մեծ թիվ տվին արհեստի ստորին շերտերը, բնավորում այդ արհեստը սկզբում յենթարկիկաց առևտրական կապիտալի քայքայ-լով աղբեղութեանը, իսկ այնուհետև հարձակում դրծող և իր ուժերը ծախսող այդ կապիտալի կործանարար հարվածներին, մանաւանդ, յերբ նա սկսեց սովելի մոտենալ արտադրութեանը և վերածվել արդյունաբերական կապիտալի: Կախարդութեան տա-րածման չափով արհեստի հետ կարող եր մրցել միայն գյուղա-ցիտութեանը: Հենց նոր ժամանակներն սկսելու հետ, այսինքն ա-ռևտրական կապիտալի հզորացմամբ, նա յենթարկվում է իրոք

դասակարգերի ամենադժան դրոշին: Վերջիններս, հենվելով կենսաբանացած պետութեան վրա, և՛ կրճատում են նրա հաղ- ոգաազդործումը, և՛ բոլորովին քչում—հեռացնում են նրան հա- դից, և՛ կաշկանդում են ճարտային շահագործմամբ, վորն իր մեջ միացնում եր ֆեոդալիզմի և կապիտալիզմի ամենանողկալի դը- ծերը, և՛ չարչարում են շրջմուլիկների մասին որենադրութեան պատիժներով, և՛ հուպ են տալիս ավելի ու ավելի սեղմորեն պտուտակիմոլ հարկային պտուտակի միջոցով, և՛ նրա վրա յեն թափում գրեթե անվերջանալի պատերազմի աղետները:

«Կախարդները» և «կախարդութիւնը»—անգոր, ստորին, ին- ղիլիդուալիստական, բաժան-բաժան յեղած, մանրատված, ա- տումացած ուսկցիան և ընդդեմ առևտրա—կապիտալիստական հա- սարակութեան, վորը շահագործվողների հետ ունեցած իր հարա- քերութիւնների մեջ դրսևորում և գնալով ավելի ու ավելի ա- ճող դադանային դաժանութիւն:

«ԿԱԽԱՐԴՈՒԹՅԱՆ» ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպե՞ս հայտնի յե, գտնում եյին, վոր կախարդներն ունեն իրենց հատուկ տեխնիկան և սատանայի պաշտամունքի իրենց հատուկ ուրուալը:

«Դեպի խրախճանք թռչելու» համար բախական չե՞ր առա- սանել հմայութիւններ և կատարել մարմնի կարալիստական (դադանադիստական) շարժումներ: Դրա համար անհրաժեշտ եր նաև կախարդական սպեղանիներ քսել իրեն, իսկ յերբեմն ել, դրա- նից վատ, ընդունել վորեւ հեղուկ գեղ:

«Կախարդական դեղորայքի» եյական մասը կազմում են թրմ- րեցնող նյութերը, վորոնք նյարդա—ուղեղային սիստեմի վրա ֆի- զիկական աղբեցութիւն են գործում հենց աշխարհի բնական ձևով, ինչպե՞ս, որինակ, սպիրտը, ոսլիումը կամ հաշիշը:

Բայց «կախարդներին» համար դիւալվոր միջոց թվում եյին, իհարկե, վոչ այս բաղադրիչ մասերը, վորոնք, ինչպե՞ս մենք ա- ժամ դիտենք, միանգամայն բնական ներգործութիւն եյին ա- նում: Նրանց թվում եր, թե կախարդական ներգործութիւնն ա- ղահովվում և աշխարհի «սարսափելի» խառնուրդներով, ինչպե՞ս եր գորտի կամ շան արյունը, մեղը, յերեխայի դիակի մզվածքը:

Այդ խառնուրդները հնարելու մեջ, ըստ յերևութին, արտահայտվում եր յուրաքանչյուրի ինդիվիդուալ ստեղծագործությունը:

Բայց լավ, ճիշտ կազմած գեղարարքն ել—այդ՝ դեռ բոլորը չէ: Առանց համայնմանքի դրանք չեն ներգործի:

Յեւ այստեղ մենք հանդիպում ենք մտածողության այնպիսի կարգի, ինչպես և քրիստոնեական յեկեղեցիներում և հենց բոլոր կրոններում ել: Յեկեղեցահաւատները նույնպես դիմում են նյարդա-ուղեղային սխտմի վրա ֆիզիոլոգիական ներգործություն անելուն՝ պահքին, ընդհանրապես «մարմնի հյուծմանը», խարաղանմանը, «հսկմանը», այսինքն՝ յերկար ժամանակ քնից հրաժարվելուն, առանձնությանը, խնկարկմանը (խունկ ծխելուն) և այլն, վորոնք հաջողությամբ դուրս են բերում պսիխիկան հավասարակշիռ վիճակից: Այս բոլորին նմանապես միացվում են աղոթք կոչվող թովչությունները: Առանց դրանց՝ ֆիզիկական ներգործությունները, ըստ հավատացյալների համոզման, ցանկալի արդյունք չեն տա:

Յեւ ըստ բարեպաշտ քրիստոնյաների համար, և՛ մերժված կախարդների համար ստացվում է միևնույն արդյունքը՝ հալուցի-նացիանք, դառանցական տեսիլներ:

Բայց այդ հալուցիանքիաները վրմանց փոխադրում եյին յերկինքը, աստծու առջև, իսկ մյուսներին—Բրոկեն կամ Ճաղատ լլառը՝ Բեհեզդերուզի կամ Ամոգեյի մոտ:

Այլիլ քան լավ հասկանալի յե, վոր յեկեղեցահաւատը, փոխելով նրա յեկեղեցու հրահանգած պրիմները, նյարդային քայքայման վիճակում տեսնում է ընդհանրապես հենց այն, ինչի մասին նա սովորել եր լսել իր սուրբ գրքերում և «վարք սրբոց»-նե-րի մեջ. այդ պրիմները հենց բուն սկզբից այդ ուղղությամբ եյին տրամադրում նրա նյարդային սխտմը: Բայց ավելի ևս պարզ է, վոր նրան չեյին ընդունում արդարակյաց, նրա պատմությունները վանքերում չեյին կրկնի, նրան խիստ ապաշխարանքի (պատիժ) կենթարկեյին, յեթն նա խուսափեր նրանից, ինչին վոր յեկեղեցին եր հրամայում հավատալ:

Ընդհակառակը, չարաբախտ կախարդուհին «կախարդական» գեղարարքով իր վրա ներգործելով, հենց բուն սկզբից համոզված էր, վոր դրանք իրեն կարող են հասցնել հաղորդակցության միայն «չար վոգու» հետ: Ուստի, հենց վոր նրա գլուխը սկսում էր պտտվել, նրան արդեն թվում եր, վոր նա ծխնելույզով դուրս է թռել, սլանում է դեպի սատանաների խրախճանք:

Բայց վորտեղից են վերցված նյարդային սխտեմը համա-
տարակշռութիւնից դուրս բերելու այս յեղանակները:

Գրիստոնեութիւնը չէ, վոր հնարել է յեղանակներ, վորոն-
ցով համատացյալները վորեւտեսութեան վիճակի ելին հասցվում.
նա դրանք յուրացրել է արեւելյան մինչքրիստոնեական կրոն-
ներից:

Մարմին հյուծելը, զգայականութեան դրդող խնկարկում-
ները, ժամասացութեան թատերական եփեկումները, հենց վանքերի
սարքվածքը՝ իրենց մշուշով և կիսամշուշով և այլն, — այս բո-
լորն արդէն բարձր մշակվածութեան եր հասել մինչքրիստո-
նեական կրոնների բազմադարյան պատմութեան մեջ: Գրիստո-
նեութիւնը կարողացավ այս ամենը պարզապէս յուրացնել, մի
վորը համապատասխանեցնել և վորոշ բան փոքր ինչ մշակել:

Կախարդներն ավելի քիչ ընդունակ ելին անձամբ հնարելու
իրենց դեղորայքը և իրենց՝ «աստծուն ատելի» դործողութիւն-
ները, վորոնք նրանց ուխտուալն ելին կազմում: Վոչ մի կասկածի
յն թափա չէ, վոր նրանք կարող ելին ոգտադործել և լայնորեն
ոգտադործում ելին համառորեն պահպանված այն պրիմների
մնացորդները, վոր կիրառվել ելին խիստ վաղ ժամանակաշրջանի
գերմանական և կելտական (Ռուսաստանի համար — սլավոնական
և Փին-թուրքական) ժողովրդական կրօնների մեջ:

Ընդհանուր պատմա-կուլտուրական հայեցակետից քննելով,
տեսնում ենք, վոր կրոնական տրամադրութիւնների այդ Փիղի-
կական հենարանները և մարդկանց եքստազի հասցնելու այդ մի-
ջոցները իրենց սկիզբն առնում են մարդկութեան զարգացման
վայրենական շրջանից: «Կախարդները» ավելի կոպիտ և անմի-
ջական պրիմները համապատասխանում են կուլտուրայի ավելի
ցածր աստիճաններին. սլափիկայի վրա ազդելու համեմատաբար
նուրբ և արտաքնապէս պակաս նյութական քրիստոնեական յեղա-
նակները հանդիսանում են պարզապէս նրանց հետագա զարգա-
ցումը: Բայց միջակա ողակը, վորպիսին ծառայեցին Արեւելքի
կրոնները, վորոնք իրենց հետեւում բազմադարյան պատմութիւն
ունենին, հիշողութիւնից չբացել ե: Ուստի, յերկար ժամանակ
թվում եր, թէ քրիստոնեական արարողութիւնների և վհուկի
կախարդութեան միջև անանցանելի անդունդ է ընկած:

Համայնութիւնների ուսումնասիրութիւնը նույնպէս յերեան
կրերեր ժողովրդական կրոնների բազմաբարդ և անկասկածելի
արձագանքները, վորոնք խառնված են ամենաբազմազան, մա-
սամբ անակնկալ, մոտիվների հետ: Այստեղ վորոշ բան ներթոյն

ե և՛ աչքիմիկները «հերմետիկական գիտությունից», և՛ «քաղ-
դապետները հին իմաստությունից», և՛ աստրոլոգիայի մեջ
աբաբների մուծանքները:

Մեզ բոլորովին չպետք է դարձացնել, վոր քրիստոնեու-
թյան առկա, վորը գրեթե հազար տարի յեր, ինչ ընդգրկել եր
բոլոր արևմտա-յեւրոպական յերկրները, զեռևս թագնվել եյին
ու անթիզված մնացել, ժամանակ առ ժամանակ կրակների պես
բռնկվելով, «հեթանոսական» ժողովրդական կրոնների մնացորդ-
ները: Նրանք հաճախ հանդես եյին գալիս բացահայտորեն, իրենց
դոյությունը զարգացնելով հարսանեկան և հուղարկալորական
ծեսերի և յերգերի մեջ, բուռն խնդության մեջ, ժողովրդական
տոների «սանձարձակ» սովորությունների և կենսուրախության
մեջ: Բայց հեթանոսության ե՛լ ավելի մեծ մնացորդները ստիպված
եյին թաղնվել: Նրա աղեսպտները և քուրմերը հանդիսանում
եյին կախարդներն ու կախարդուհիները, վորոնք ժամանակ առ
ժամանակ գնում եյին անտառ և այնտեղ վորևէ մի կաղնու տակ
ապրորինակ շարժումներ եյին անում, մրթմրթում եյին խորհրդ-
գափոր հմայություններ և ապա վերադառնում եյին՝ իրենց հետ
բերելով կախարդական խոտեր, արմտիք և բժշկում եյին հա-
րեաններին և նրանց անասուններին:

Գուցե, մասամբ ժողովրդական կրոնների հետ «կախարդու-
թյան» ունեցած կապի մեջ պետք է փնտռել բացատրությունը և
այն փաստի, վոր վհուկներն ու կախարդուհիներն անսահմա-
նորեն ավելի շատ եյին, քան վհուկներն ու կախարդները: Քրիս-
տոնեությունը կազմավորվեց մի նպոխայում, յերբ հայրիշխա-
նական ընտանիքը լիովին հաղթել եր մայրիշխանությանը: Այս
պատճառով բոլոր քրիստոնեական կրոնները գիտեն միայն քուր-
մեր, բայց վոչ քրմուհիներ: Ընդհակառակը, Յեւրոպայի բար-
բարոս ժողովրդների մոտ, յերբ նրանց մեջ տարածվում եր
քրիստոնեությունը, տակալին պահպանված եյին տոհմային
իմբում կանանց ունեցած ազդեցիկ դերքի բազմաթիվ մնացորդ-
ներ (ուղեղիմենտներ), և դրա համար կինը զեռևս չեր հեռաց-
ված պաշտամունք կատարելուց: Ընդհակառակը, վորոշ զեսպե-
րում նրան այստեղ պատկանում եր աչքի ընկնող դեր: Իսկ
քրիստոնեական «սուրբ» տղամարդիկ բազմապատիկ անգամ ա-
վելի շատ են, քան կանայք: Արդեն սրանից հետևում է, թե
վորքան անհամոզիչ և կախարդուհիների տարածված լինելը կա-
նանց նյարդային համակարգության համեմատական անկայունու-
թյամբ բացատրելը:

Թե վորքան կենսունակ են ժողովրդական կրոնները և ինչպիսի անակնկալ ձևերով նրանք կարող են արտահայտվել,— գրան վիճակվում եր Հանդիպել մինչհեղափոխական Ռուսաստանում մինչև վերջին ժամանակները: Վոգուլները, վոսյակները, չերեմիսները, զիրյանները՝ ստիպողաբար կցագրվելով ուղղափառությանը և գրվելով տերտերների հսկողության ներքո, թաղվում էին անտառներում տերտերներից ու այլ իշխանավորներից, շարունակելով ապրել «հեթանոսական» կրոնական կյանքով, և նրանց համար միայն նա յեր իրական, ներքին ազատություն, և վոչ թե արտաքին, հարկադրական, շինծու, կրոնական կյանքը: Իսկ այնուհետև վերցնենք գյուղերի «չրվա-հերկումը» համաճարակի և անասնամազի (пастежа скота) դեպքում, պառավներին ֆանտաստիկ գործողությունները, վոր նրանք կատարում էին մազերն արձակած, ուղեկից ունենալով թափա-ները, վառարանի ծխանքի փականները և դռնակներն իրեն թմբուկ թմբակահարող ամբոխը,—իսկ ի՞նչ է այս ամենը, յեթե վոչ «հեթանոսական» հին ժամանակներում յեղածի կրկնություն: Իսկ այս բոլորը պատահում եր դեռևս մի քառորդ դար սրանից առաջ, այն ել՝ գերակշռող ուսական բնակչություն ունեցող գյուղերում:

Մինչքրիստոնեական ժողովրդական կրոնների բեկորներն ու արձագանդները «կախարդների» մոտ անխուսափելիորեն ստանում էին ազավաղված և այլանդակ բնույթ: Կախարդները ծնվում ու աճում էին քրիստոնեական յերկրներում, իր ժամանակին յերկյուղածությունյամբ յեկեղեցի էին գնում ու կատարում էին քրիստոնեական բոլոր ծեսերը: Քրիստոնեությունն արդեն մեծ իշխանություն եր ձևք բերել նրանց վրա: Պարզապես չընդունել այն և յերկրպագել հին աստվածներին,—յեթե այդպիսիներին նրանք դեռ ճանաչում էին,—կախարդներն անգոր էին: Բայց նրանք հենց իրենց համար ակներև կերպով կտրվում էին քրիստոնեությունից և անցնում էին ինչ—վոր այլ, վոչ—յեկեղեցական, խորհրդավոր ուժերի ծառայելու: Նրանք այդ խզմանը չէին կարող առ վոչ մի այլ բացատրություն, բացի քրիստոնեական բացատրությունից՝ ասածուց բաժանվելով, նրանք հանձնվում էին սատանայի իշխանությունը:

Ինչ վերաբերում է «սատանայական խախտանքներին», դեպի ուր թռչում էին կախարդներն իրենց հալուցինացիաներում, ապա նրանք, ինչպես արդեն հիշատակված է, հանդիսանում էին քրիստոնեական ծեսերի և խորհուրդների ամենա«սրբապիղծ»

ծաղրանկարը: Վերցնենք թեկուզ մեղը, շան արյունը և կնոջ դաշտանային արտադրանքի նյութը վորպես հաղորդություն տալը:

Դրա մեջ արտահայտվում էր անգոր միայնակների կրքոտ բողոքը, հիստերիկ մոլեգին մարտահրավերը՝ ատելի հասարակությանը և այդ հասարակության կրոնին: Այդ—անտեսանելի ուռմբեր ելին, վորոնց նետելու մեջ իր յեւքն էր դառնում ճղմված և ձեծկլամբ մարդկանց բորբոքուն զայրույթը:

XVI և XVII դ.դ. այդ այդ անարխիստների նկատմամբ իշխող դասակարգերը դատաստան տեսան նույնպիսի անողորմությամբ, ինչպես XIX դարի վերջերքի կապիտալիստական պետությունը նորագույն անարխիստների նկատմամբ: Յեւ, պետք է ասել, նրանցից հազիվ թե պակաս էին վախենում, քան ժամանակակից բոմբիստներից: Պետրոս I-ը իր զվարճանքներում և կերուխումներում ազատամտորեն բարձրանում էր աստվածահայհոյության մինչև սահմանային բարձունքը: Բայց դյուրանքի ու կախարդանքի մասին մտածելիս՝ նրան եւ ահ էր պատում: Այս տեսակետից նա ազդակից էր XV դ. լուսավորված և ազատախոհ պապերին, վորոնք պարծենկոտությամբ ցուցադրում էին իրենց համախոհությունը անտիկ կրոնների հետ և իրենց արհամարհանքը դեպի անկուլտուրական և կոպտավուն քրիստոնեությունը, սակայն դուռնառվում էին, յերբ լսում էին կախարդական դործողությունների մասին: Այդ մարդիկ զգում էին, թե ինչպիսի անհուն ատելություն և վրս—չլիտակցված, բայց դրանով վոչ նվազ սարսափելի—ատելություն ու վրս է կուտակվել չարարախոս «կախարդների» հոգու մեջ:

9

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՉՆՁԱՅՆՈՒՄ Ե «ԿԱԽԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ»

Արդյունաբերական կապիտալի դարաչրջանին մոտենալով «կախարդների» և «թողողների» դեմ ուղղվող դատավարություններն սկսում են նվազել, իսկ նրա զարգացմամբ՝ բոլորովին վերանում են:

Արտադրական պրոցեսները դնալով ավելի յեն հրաժարվում պապենական հնամուլությունից, արտադրական հմտությունը դադարում է միատերիա լինելուց, «արհեստի զաղտնիքներին»

հաղորդակից դարձնելը, յեթե այն տակաւին պահպանվել եր, վերածվում է վորեւէ լուրջ նշանակութիւնից դուրի դատարի ծիրակատարութեան: Գիտութիւնը գնալով ավելի ու ավելի յե աշխատում տեխնիկայի ուղղակի առաջադրանքները համաձայն: Մեխանիկան մեծ առաջադիմութիւն է անում, ձգտելով ստեղծել ձիւղաց, ջրաղացից կամ հողմաղացից ավելի կատարյալ մոտոր, ֆիզիկան յերեւան է հանում դադերի ընդարձակման որեւէ ներքնապատակ գնելով կատարելագործել առաջին ծանրամեծ շոգեմեքենաները, վորոնք շուրջարար վառելանյութ են կլանում և այդ բոլորով հանդերձ համեմատաբար թույլ են:

Նույնիսկ հողագործութիւնը XVIII դարում նշանակալից տեղաշարժ է կատարում՝ հողն ուժասպառ անող պապենական տրագիցիային կուրորեն հետեւելուց ձեռք քաշելով: Ընչտ է, քիմիայի անդարդացած լինելու հետեւնքով այն ժամանակվա ագրոնոմիկան չէր կարող տալ իր մեծախոստում նախաձեռնումների գիտական բացատրութիւնը:

Սակայն և այնպէս նա ավելի ու ավելի լայնորեն կիրառելով ուսցիտնալ բաղմադաշտային ցանքաչըջանառութիւնը, արդեն շուրջափելով մոտենում եր բերքի այն կատաստրֆիկ տատանումների ճիշտ ըմբռնմանը, վորոնք անխզելիորեն կապված էին հողագործութեան մեջ պապենական համալ մեթոդների տիրապետման հետ և ծառայում էին վորպէս մեկն այն հալատքի նեցուկներից, թե աստվածային և սատանայական ուժերը մշտապես միջամտում են մարդկային կյանքին:

Տեխնիկայի այսպիսի փոփոխման կապակցութեամբ, նրա ուսցիտնալացման առաջին քայլերի կապակցութեամբ ալքիմիկին ու մետաֆիզիկին բնութեան ճանաչողութեան գործում փոխարինում են գիտական հետազոտողները, քիմիկոսները և ֆիզիկոսները:

Հետազոտողը հենց սկզբից ձեռնամուխ է լինում իր խնդրին, յենելով այն հիմնական սկզբունքից, վորը պարտադիր է դարձել գիտութեան ամբողջ ընադալառի համար, վոր աշխարհում չկան գիտութեան ամբողջ ընադալառի համար, վոր աշխարհում չկան գաղտնիքներ, այլ կան պրորբիմներ, վորոնք յերեւան են հանվում դադտնիքներ, այլ կան պրորբիմներ, վորոնք յերեւան են հանվում գիտական մեթոդով, և վոչ թե ինչ-վոր հմայութիւններով: Այս գիտական մեթոդով, և վոչ թե ինչ-վոր հմայութիւններով: Այս սկզբունքը դառնում է հիմքը նոր գիտական աշխարհըմբռնման, վորի համար աշխարհում ամեն ինչ կատարվում է որինաշափորեն, առանց ինչ-վոր գերբնական ուժերի կարծեցյալ մասնակցութեան և միջամտութեան՝ անկախ այն բանից, արդյոք նրանք բարի ուժեր են համարվում, թե չար:

Այսպիսով, խորտակվում ե հալածող դեպի գերբնական ու-
ժերը՝ ընդհանրապես, իսկ զրա հետ մեկտեղ՝ նաև հալածող
դեպի թուլչութունն ու կախարդները և դեպի նրանց հմայու-
թյան գորութիւնը: Յեւ նա խորտակվում ե ամենից առաջ այս-
պես կոչված «լուսավորված հասարակութեան» մեջ, այսինքն
չահագործող, իշխող դասակարգերի մեջ, վրոնք հայածանք
եյին ուղղում պաշտոնական կրոնից ամեն տեսակ անջատվածնե-
րի դեմ:

Այն ժողովրդական մասսաները, առաջին հերթին գլուղական
մասսաները, վրոնք տակալին հալածում են կախարդութեանը
և դիմում են նրան, չահագործողներին համար դառնում են «խա-
վար ժողովուրդ», «տգետ ամբոխ», վրոն արժանի յե մեծամիտ
կարեկցութեան, բայց վոչ յերբեք՝ վայրադ հալածանքներին:

Մյուս կողմից, XVIII դարին հասնելիս, արդյունաբերական
կառլտալի սկսման ետլիսայում, չահագործվողների տնտեսական
և արտատնտեսական յենթարկման միջոցներն աճեցին և դար-
գացան մինչ այդ ժամանակը չտեսնված չափով: Կապիտալն ար-
դեն սկսում եր իրեն զգալ, մասամբ ել գիտակցել, վրպես կյան-
քի փաստական տեր: Նախնական կուտակումն արդեն կատարել
եր աշխատանքի հսկայական բաժինը, այն ե՝ մասսաներից խել
եր ինքնուրույն տնտեսական գոյութեան բոլոր անհրաժեշտ պայ-
մանները, գլուղացիներին և բանվորներին ջախջախել, մարդկա-
յին մանր փոշու յեր վերածել, զրկել եր կապիտալին յենթարկ-
վելուց դուրս գոյութեան ունենալու ամեն մի հնարավորութեան-
նից: Իսկ այստեղ կապիտալին ոգնութեան յեկալ նաև ամբողջ
և գնալով ամբելի ու ամելի կենարոնացող պետութեանը՝ շրջո-
ւելներէ վերաբերյալ որենադրութեան, չքողարկված դաժան դա-
տակարգային դատարանների, տաժանակրային բանտերի և աշ-
խատանքային տներին հարուստ ինվենտարով: Բուրժուան, ինչ-
պես և կալվածատերը, իր ուժով արեցած լինելով, կարող եր
միայն ծիծաղել հմայութեաններին, մույլ հայացքներին և կա-
խարդների ամեն տեսակ կախարդական միջոցների վրա: Այրե-
լու փոխարեն, նրանց սկսում են բուժել:

Իրենց առաջին հեղափոխական թափի և հարձակման ժամա-
նակ բուրժուական հասարակութեան իդեոլոգները հանդեցին ընդ-
հանրապես գերբնական ուժերի բացամանը: Բայց բուրժուական
բնաղը համենայն դեպս սողանցք ե թողնում, վրով հետագա-
յում կարելի կլիներ ներս քաշել ապոծուն, իսկ, նրա հետքերով,
և վրեհ դրական կրոն: Այդ սողանցքը դեիդմ եր (հավատքը

գեպի «բարձրագույն եյակը», դեպի «գերագույն բանականութիւնը, վորն ուղղութիւն ե տալիս աշխարհին» կամ «որենքներն ե սահմանել»), վորը մի շարք անցման աստիճաններով ձուլվում ե իդեալիստական փիլիսոփայութեան հետ:


Ինչպէս գերիզմի համար, այնպէս ել յեկեղեցական կրօնների համար ե՛ հերետիկոսների համար, ե՛ աղանդավորների համար— նրանց սեփական հայացքները դարձան «հավատ», իսկ կախարդների հայացքներն ու գործողութիւնները՝ «սնահավատութիւններ»:

Նրանք աչք են փակում իրենց համար տհաճ այն փաստի առաջ, վոր յուրաքանչյուր հավատ, քանի դեռ նա ուժեղ ե ե քանի դեռ հավակնում ե աշխարհի սպառիչ բացատրութեան, հենվում ե յերկու վոտքերի վրա՝ դեպի աստվածը յեղած հավատի ե դեպի սատանան յեղած հավատի վրա: Լիակատար ե ներքուստ լիավարտ հավատի համար բարի աստվածը, վոր խաղն ուղղում ե դեպի մարդկութեան բարորութիւնը, անհրաժեշտ ե նույն հավաք, ինչ չափով ե սատանան, վոր ջլատում ե աստվածային գործունեութիւնը: Հավատը դեպի սատանան, այդ—հիմքն ե քահանայի ազտակարութեան հավատի: Յեթն չլինել դժոխքը ե սատանայական դավերի սարսափը, յերեք չլին դիմի քահանայի ոգնութեանը: Յեւ դեպի սատանայական խրախճան թռչող կախարդներն ամբողջական կրօնական աշխարհայացքի համար անհրաժեշտ են վոչ պակաս, քան յերկինք համբարձող սրբերը:

«Մնահավատութիւնը» հավատին հակադիր ինչ—վոր բան չե: Այդ—դերձական ուժերի գոյութեան ե մշտական գործունեութեան վերաբերյալ յեղած յերեմանի կենդանի ամբողջական հավատի մի տարրն ե, վոր մեխանիկորեն կտրել են նրանից:

«Հավատը» «սնահավատութեանը» հակադիր ինչ—վոր բան չե: Դա—այն վոտքն ե, վորը դերիշխող դասակարգերը տակաւին ցանկանում են պահպանել կրօնի տակ՝ շահագործվողներին կառավարելու հարմարութիւնների համար, թեպէտ նա նույնպիսի ուսմարելու հարմարութիւններն ունի, սպեղանիներով պատած, բինտերով խեղված ու ալյանդակված, սպեղանիներով պահպանվող մի վոտք ե, ինչպէս ե կրօնի ասկից դուրս թոցրած «սնահավատութեաններ» վոտքը:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Հրատարակչության կողմից	3
Դեպի աստված և դեպի սատանան յեղած հավատի մասին	4
1. Կախարդությունները և հմայողները	5
2. Աստծու քուրմերը և սատանաները	8
3. Հին աստվածները և քրիստոնեությունը	15
4. Դատաւարություններ կախարդների դեմ	20
5. Ռեֆորմատորները և հերետիկոսները	25
6. Սպիտակ և սև մոգություն	29
7. «Կախարդություն» սոցիալական արմատները	35
8. «Կախարդության» դասակարգային ելությունը	37
9. Գիտությունը վոչնչացնում է «կախարդությունը»	42



Քաղաք. Հ. Հասարայան
Խմբագիր Վ. Փինայան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիդեյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Դրավիտի լիազոր № Կ-2454 հրատ. № 637,
Պատվեր № 2, տիրաժ 5.000
Հանձնվել է տրտադրության 28/ՀII 1933 թ.
Ստորագրվել է ասպագրելու 11/II 1939 թ.
Գինը 80 կ.

Պետհրատ—Փաղաքական գրականության հրատարակչության
ասպարան, Յևրեան, Ալավերդյան № 65


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035606

14 ԳԻՆԲ. 80 Կ.

(22к)



Н. СКВОРЦОВ-СТЕПАНОВ

О ВЕРЕ В БОГА

И ДЬЯВОЛА

Армиз - Издательство полит. литературы
Ереван, 1939